

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

889.6

Ա. Պ. ՆԵԶԱՅԵՎ

====ՀԱՂԲ=====

ՅԵՎ ՆՐԱ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

12 ՆԿԱՐՈՎ

Թարգմ. Ռ. Ա. ԲԱՐԵԼՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

Ա. Պ. ԿԵԶԵՆ

631.48-631.4:55

ՀՈՂԵ ՅԵՎ ՆՐԱ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ


12 ՆԿԱՐՈՎ

Թարգմ. Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926



A II
39097
Հ-210

№ 333

Գրառեպվար № 287 թ.

Տիրաժ 6000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ՀՈՂԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.

Հողը յերկրի պտղաբերության մայրն ե, նրա բարության գրավականը։ Ուստի զարմանալի չե, վոր նաշատ հնուց արդեն գրավում եր մարդուս ուշադրությունը և նրա հոգածո ուսումնասիրության առարկան եր։ Վոռոգման և ճահիճների ցամաքեցման արհեստական ձևերը գործադրվում եյին տակավին շատ հնում յեղիպտացիների և ասորեստանցիների ձեռքով։ Այսուամենայնիվ դեռ մի յերեսուն տարի առաջ հողագործությունն ուներ զուտ գործնական բնավորություն և, իրեւ գիտության մի մասնաճյուղ, հետաքրքիր եր սոսկ գյուղատնտեսների համար։ Սակայն վերջերքս փոխվեց իրերի դրությունը։ Հողը, վոր հանդիսանում ե յերկրաբանական ամենատարածված ձևացումներից մեկը, սկսեց ուսումնասիրվել այլ և այլ կողմերից։ Նորագույն այս գիտությունն ուսումնասիրում ե վոչ միայն հողի այն հատկությունները, վորոնք նշանակություն ունեն բույսերի աճեցողության համար, այլ ձգտում ե լուսաբանել նաև նրա ծագման պայմանները, հետազոտել նրա կյանքը և ակնհայտնի դարձնել նրա տարածման որենքները։ Այս տեսակետով հողն ստանում ե մյուս այն բնապատմական մարմիններին լիակատար հավասար իրավունք, վորոնք մտնում են յերկրի կեղեի կազմի մեջ և ձևացնումն ըստ մակերևույթը։ Հողագիտությունը կորցնում ե իր բացառապես գործնական բնույթը և սերտորեն կապակցվում յերկրաբանության, պետրոգրաֆիային և հանքաբանության։ Բազմաթիվ մասնագետների շանքով այս մատաղ գիտությունն առաջ եր ընթանում վիթխարի քայլերով և արագությամբ ընդլայնում իր հորիզոնը։ Տասը տարուց ավելի չե, յերբ

վերջնականապես պարզվեց, վոր հողի ծավալումը յերկրի յերեսին բնավ պատահական մի յերեսություն չեւ հողի ամենագլխավոր տեսակները տարածվում են կանոնավոր զոնաներով կամ գոտիներով, վորոնք հաջորդաբար փոխարինում են իրար հասարակածից դեպի հյուսիս դնալով։ Այս շափազանց կարևոր որենքի հայտնագործությամբ հողերն ստացան առանձին հետաքրքրություն նաև աշխարհագրության համար։ — Հողն եւ այն միջավայրը, վորտեղ զարգանում եւ բուսականությունը նա կյանքի և մեռելության միջնորդ ողակն եւ ինքնըստինքյան հասկանալի յե, վոր հողի ծավալման նորերս հայտնաբերած որենքները նոր լուսով ներկայացրին շատ փաստեր, վորոնք վերաբերում են բույսերի բաշխմանը յերկրագընդի վրա։

Հողագիտությունն, իբրև անկախ գիտություն, ծնունդ առավ և անցավ իր յերիտասարդական հասակը Ռուսաստանում։ Նրան հիմք ծառայեց ակադեմիկոս Ռուպրեխտի սկանդոլի հիմնական ուսումնասիրությունը, վոր լույս տեսավ 1866 թվին, իսկ նոր գիտության հոյակապ շենքը կանգնեցրին մոտերքս վախճանված պրոֆեսոր Վ. Վ. Դոկուչայևն ու իր բազմաթիվ աշակերտները, վորոնցից հանգուցյալ պրոֆ. Ն. Մ. Սիբիրցեին եւ պատկանում հողերի գոնալ տարածման որենքի վերջնական ձևակերպությունը։ — Նրա նշանավոր հոդվածը՝ «Հողերի գենետիկան դասավորման հիմունքների մասին», լույս տեսավ 1895 թվին։ Ամերիկայում հողագիտությունն սկսեց զարգանալ միայն ամենավերջին ժամանակներս, և այնտեղ այս նոր ուղղության ներկայացուցիչ հանդիսանում է կալիֆորնացի պրոֆեսոր Հիլգարդ (Hilgard)։

Ի՞նչն եւ պատճառը հողագիտության այդքան ուշ զարգացման։ Ինչու Արևմտյան Յեվրոպան, վոր գիտության բոլոր ճյուղերով կանխել եր Ռուսաստանը, յետ մնաց նրանից՝ յերկրաբանական ամենամակերես, դիտողության ամենից մատչելի այս ձևացման ուսումնասիրու-

թյամբ*: Առաջին իսկ հայացքից առեղծվածային այս հարցերը լուծվում են չափազանց հասարակորեն.—Արևմտյան Յեվրոպայում նախատիպ, բնական հողեր համարյա թե գոյություն չունեն. նրանք իսպառ փոփոխվել են մարդու ձեռքով. Զկա այնտեղ մի կտոր հող, վոր խարխլած, մայր տեսակի կամ ստորհողյա շերտի հետ խառնված, աղբած, ամեն տեսակի նյութերով պարարտացրած չլիներ,—մի խոսքով՝ մշակությունը փոփոխել ե Արևմտյան Յեվրոպայի հողերը նրանց բնական տեսքն ու հատկություններն իսպառ կորցնելու չափու. Այլ պատկեր ենք տեսնում մենք Ռուսաստանում։ Այստեղ, դեռ պառկուկ, մնում են կուսական, գութանի յերես չտեսած հարյուրավոր միլիոն դեսիատին հողեր. Լայնածավալ անտառներ, նախնական տափաստաններ, վոչ մի կուլտուրայի յերես չտեսած ճահիճներ և լեռնաշխարհներ ձգվում են տասնյակ, հարյուրավոր, մինչև իսկ հազարավոր վերստերով։ Ռուսական հողագործական կուլտուրան քիչ ե յենթարկել իրեն յերկրի հողի պայմանները, սակավ ե նպաստել նրանց փոփոխությանը։ Հյուսիսում և հարավում կիրառվող հողի շահագործման յուրահատուկ ձևերը—«անտառահատություն» և «խամացնելու» սիստեմներն ու դրանց հետ մեկտեղ համեմատած և չափազանց անձեռնտու յեռադաշտային սիստեմը*** պարզ վկայում են, թե վորչափ մենք

* Յերկրաբանությունը մեր մոլորակի կեղևի փոփոխությունների գիտությունն և. դրանք են կազմում նրա պատմությունը։ Յերկրաբանական ձևացում—դա մարմին ե, վոր ստացել ե իր քնորոշ հատկությունները շնորհիվ այն պրոցեսսների, վորոնք փոփոխում են յերկրի մակերեսույթի տեսքը։

** «Անտառահատության» (подсечная) սիստեմը, վոր կիրառվում ե մեր հյուսիսի անտառային շրջանում, այսպես ե.՝ անտառում ընտրում են մի կտոր տեղ, վոր վորոշ նշաններից հողագործության հարմար ե նկատվում, կտրատում են նրա վրայի ծառերը, այրում նրանց տեղն ու տեղը, վարում են հողը և ցանում հացահատիկ։ Այդ կտոր տեղը շահագործվում ե միքանի տարի, առանց նրան պարարտանյութեր տալու, վորից աստիճանաբար ընկնում ե հողի բերքը և, յերբ այդ նվազագույն չափի յե հասնում ու մշակելը ևս դառնում ապարդյուն, ձգում են յերեսի վրա՝ մինչև վոր նա նորից անտառով ծածկվի, և նրա տեղ

յենթարկված ենք բնության և վորքան կախումն ունենք նրանից։ Այս պատճառով Ռուսաստանում ամեն տեղ մենք հանդիպում ենք միայն կիսաբնական հողերի, վորոնց բնական հատկություններն անպայման գերազանց են կուլտուրայի տվածներից։ Հենց այս բնական հողերի վրայել ծնունդ առավ այս նոր գիտությունը, և կարճ տարիներում նրա հետազոտությունները տվին իրենց առաջ պտուղները... Բնական հողերն ըմբռնելու և ուսումնասիրելու համար գեռ ել ավելի լրիվ ու պայծառ նյութ մատակարարում եր Ամերիկան իր «նոր հողերով, իր լայնածավալ, հաճախ կուսական տափաստաններով, պրեռներով և անտառներով», և հասկանալի յե, վոր ոռւս հողագետների սերտ ու համերաշխ ընտանիքին շուտով պետք ե միանային նաև Ամերիկայի գիտնականները։

Բնական հողերի բացակայության պատճառով Արևմտյան Յեվրոպայում չեր կարող կազմվել հողի մասին նույնիսկ կանոնավոր, փոքր ի շատե վորոշակի մի հասկացողություն։ Գիտնականներից վումանք «հող» տերմինով հասկանում եյին յերկրի կեղեի* ամենավերին շերտերը. ուրիշները՝ յերկրի այն շերտը, վորի մեջ սփռված կան բուսաբաններ. յերրորդները հողը նույնն եյին համարում, ինչ վոր նրա հերկով բռնված հորիզոնը։ Բոլոր այս տեսակ չափազանց խառնաշփոթ բնորոշումները

ընտրում մի ուրիշ նորը։ Անտառահատության սիստեմին նման ե «խամացնելու» (залежная) սիստեմը, վոր կիրառվում ե մեր հարավի տափաստաններում։ Վարում են խամ տափաստանը, շահագործում այնքան, վոր իսպառ ուժից ընկնի, ապա ձգում յերեսի վրա, թողնելով վոր խամ կտրի ու հետղհետե խոտակալի Յեռադաշտային սիստեմով մշակելի ամբողջ հողի կտորը յերեք բաժին են անում. մի բաժինը հատկացնում գարնանացանի, մյուսը աշնցանի, իսկ յերրորդը՝ ցել են անում, թողնելով, վոր հանգիստ առնի և բնական ճանապարհով նորից յետ ստանա մշակվելուց կորցրած իր առաջվա հատկությունները։

* Այստեղից, որ., ծագում են, յերկրաշարժներ նկարագրելիս, սխալ արտահայտություններ (զգացվում եր հողի ցնցումն, հռղի յերերվում եր ալիքանման) կամ՝ յերկրաբանական կառուցվածքը նկարագրելիս (ֆինլանդիայի հողը կազմված ե գրանիտից), և այլն։

• 1. *Ламповый музыкальный*



դուրկ եյին վորևե գիտական հիմունքից. Նրանց հենակետը Արեմտյան Յեվրոպայում տիրող արհեստական հողերի զուտ պատահական նշաններն եյին։ Միայն հանգուցյալ պրոֆ. Վ. Վ. Դոկուչայեն եր, վոր առաջին անգամ տվեց այդ հասկացողությանը միանգամայն պարզ և գիտական լիակատար բնորոշում։ Նրա ասելով, հողը յերկրի կեղեվի ամենավերին շերտն ե, վոր փոփոխվել ե կլիմայի, ողի, ջրի, կենդանիների յեվ բույսերի համագործակցությամբ։ Դա միանգամայն անկախ մի բնապատմական մարմին ե, իր բնորոշ, ինքնամփոփ հատկությունների միասնականությամբ։ Նա առաջանում ե զանազան, յերբեմն շատ բարդ, պրոցեսսների ազդեցությունից և, ինչպես ամեն մի յերկրաբանական մարմին, յենթակա յեփոփոխությունների։ Մի խոսքով՝ հողն ել, ինչպես և ամեն ինչ յերկրիս վրա, ունի իր լիակատար կյանքը, վորի որենքների լուսաբանությունն ել գիտության գործն ե։

Ի՞նչպես ե կազմակերպվում հողը։ Ի՞նչ գործոններ են ստեղծում և կուտակում յերկրի կեղեի այս վերնաշերտը։ Այդ հարցերի պատասխանը տալիս ե մի մեծ փորձ, վոր ինքը բնությունն ե կատարել ոռւսական Հին-Լաղոգա բերդի վրա, Վոլխով գետի ափին, նովգորոդցիների ձեռքով շինված 1116 թվին (նկ. 1)։ Այս բերդի վեհատեսիլ պատերը ճարտարորեն պատմեցին ակաղեմիկոս Ռուպրեխտին և պրոֆ. Դոկուչայեին, թե, ընդհանրապես, ինչ տեսակ են կազմակերպվում հողերը։ Այս ավերակների մոտ ել ոռւսական հողագիտության հիմքը դրվեց։

Գիտնականների ուշքը գրավեց հողոտ մի շերտ՝ միքանի մատնաշափ հաստության, վոր, արդեն բուսակալած, բռնել եր պատերի յերեսը վերևից։ Առաջին խկնայվածքից պարզ նկատելի յեր, վոր այս մթագույն բարուրաշերտը վոչ մի առընչություն չունի իր տակն ընկած նյութի հետ։ Հին-Լաղոգա բերդի պատերի շարանյութը դանգվածո սաւ կրաքարերից և կոպճաքարից ե, կարծր, և մուրճի հարգածից կայծեր ե թոցնում։ Քարի գույնն

ընդհանրապես բաց գորշագույն եւ և միայն տեղ-տեղ
կանաչագույն։ Ընդհակառակը, պատերի հողոտ բարուրա-
շերտը փխրուն եւ և մատներով հեշտությամբ տրորվում
է։ Նա բոլորովին միասեռ եր զանգվածով և սրճագորշ
գույն ունի։ Գրեթե կիր չկա նրա կազմի մեջ, ավելի
շատ են ավազային և կավային մանրակույտեր, աչքի ըն-
կնող դեր եւ կատարում փտանյութը—որգանական ծագում
ունեցող մթագույն զանգվածը։ Մի խոսքով՝ Հին-Լադոգա
ամրոցի պատերին գոյություն առավ իսկական հող։ Բնա-
կան կլիներ յենթադրել, վոր նրան բերել եւ քամին
ցածրից և կուտակվել եւ պատերին դրած բազմադարյան
փոշուց։ Սակայն փաստերն իսկույն եեթ ջախջախում են
նման յենթադրությունը։—Յեթե դա իրավացի լիներ, ապա
հողոտ շերտը շատ կտարբերվեր պատերի շարանյութից,
այն ինչ՝ նրա փոխանցումն իր ներքեւ տարածվող զանգ-
վածանյութին աստիճանական բնույթ ունի, չկա խիստ
սահմանագիծ հողի ու շարաքարի միջև։ Հին-Լադոգայի
պատերի հողը, անտարակույս, առաջացավ հենց տեղնու-
տեղը։ Նրա առանձնահատուկ, հետաքրքրական կողմն այն
ե, վոր նա գոյացավ մարդկանց աչքի առջև պատմական
մի աննշան ժամանակաշրջանում։

Մենք սովոր ենք քարերը համարել անփոխելի և
հաստատուն։ Դրանից ավելի սխալ բան չկա։ Նայեցեք
մեծ քաղաքների գրանիտի հիշատակարաններին։ Նրանք
բոլորն ել ժամանակի ազդեցությունից ծածկվել են ճա-
քերով, վորոնց վարպետորեն ցեմենտով լցրել եւ միայն
մարդը։ Հանգստարանների շատ գերեզմանաքարեր կտոր-
կտոր են յեղել և մինչև իսկ ավագ կտրել։ Բնական ժայ-
ռեր՝ գրանիտից, կրաքարից և ուրիշ լեռնային տեսակ-
ներից * ապշեցնում են մեզ իրենց նկարեն ձեռքով, վո-
րոնք ստացվել են քայլայումից։ Հյուսիսային և Միջին

* Էեռնային տեսակները քարե զանգվածներ են, վորոնցից
կազմվել եւ յերկրի կեղեւը։ Էեռնային տեսակներից պետք եւ զանա-
զանել հանքերը։ Լեռնային տեսակի և հանքերի տարբերությունն
իրարից պարզ կլինի, յեթե հավելույան ապրող ու փոփոխվող յեր-

Ռուսաստանի վոր բնակիչը չի հանդիպել կոպճաքարերի (булыжник), վորոնք փշրվում, ավագ են կտրում ձեռքի, նույնիսկ թեթևակի, ճնշումից։ Այս բոլոր փաստերը խիստ պարզ կերպով վկայում են, վոր քարերի մնայուն անեղծ մեր սովորական պատկերացումը միանգամայն զուրկ ե ամեն տեսակի հիմունքից։ Քարերը—հանքերը և լեռնային տեսակները, ինչպես և ամեն ինչ բնության մեջ, ունեն սկիզբ ու վախճան։ Նրանք անընդհատ փոփոխվում են իրենց կյանքի ընթացքում, նորից գոյանում ու քայքայվում։ Բոլոր փոփոխությունների այն համագործակցությունը, վորով քարային զանգվածը կատարյալ քայլայման ե հասնում, կոչվում ե ողաճարում։

Հողի գոյացությունը Հին-Լադոգա բերդի պատերին նույնպես յերկարատես ողաճարման արդյունք եր։ Յոթ ու կես դար անդադրում տքնում եր բնությունը փոփոխել բերդի պատերի շարանյութը։

Նախ և առաջ կրաքարի ու կոպճաքարի միապաղադ կտորները ճաքճքելուց փշրվել, մանր խիճ ու ավագ են կտրել։ Զուգընթացաբար աձրեաջուրը լվացել-տարել ե բոլոր լուծկեն մասերը և ամենից առաջ՝ կիրը։ Փխրած շերտում բնակավորվել ե բուսականություն, տարեց-տատարի դառնալով ավելի բազմազան ու ճոխ։ Բույսերի անկենդան մասերը մնում եյին տեղնուտեղը և քայքայվելով դառնում փտած բուսանյութ։ Վերջինս ամեն տարի ավելանալով, հողոտ շերտին տվել ե իր բնորոշ գույնը։ Այսպես ե գոյացել հողը Հին-Լադոգայի պատերին, այդ-

կիրը, պարզության համար, համեմատենք մի որգանիզմի հետ, վորի վիթխարի մարմինը, գոնե դրսի մասերով, կազմվում ե հյուսվածքներից (ткань), նման կենդանու և բույսի մարմնի մեջ յեղածներին։ Այս հյուսվածքը հենց լեռնային տեսակներն են՝ գրանիտը, ավաղաքարը, կավը, և այլն։ Կենդանական մարմնի յուրաքանչյուր հյուսվածք կազմված ե ամենամանը «անբաժանելի» վանդակներից։ Ճիշտ այսպես ել լեռնային տեսակը կազմը-վում ե հանքերից։ Այդպես, որ., գրանիտի մեջ գտնվում են դաշտասպաթը, կվարզը և փայլարը (слюда)։ Գրանիտը լեռնային տեսակն ե, իսկ կվարզը, փայլարը և դաշտասպաթը՝ հանք։

պես ել գոյանում են հողերն ընդհանրապես։ Հողերի հանքային ելեմենտները հանդիսանում են մայր տեսակի խիստ փոփոխություն կրած, ողահար մնացորդը, իսկ նրանց որգանական մասերը՝ բույսերի ու կենդանիների միասնական աշխատանքի արդյունք։

Այսպիսով հողի կազմության առաջին մոմենտը հանդիսանում ե ողահարումը։ Ամենից առաջ տեղի յե ունենում մեքենայական ողահարում, այսինքն լեռնային տեսակն ավելի ու ավելի մանր մասերի յե վերածվում։ Այս տեսակի ողահարման գլխավոր գործոնը հանդիսանում են



Նկ. 2. Գրանիտի ողահար բեկոր Ֆինլանդիայում։
Լուսանկ. Ռ. Պ. Նեչայևյի.

ջերմության ու ցրտության տատանումները։ Վորքան դրանք սաստիկ են, նույնքան ավելի արագ ե կատարվում քայքայումը։ Ցերեկվա խիստ տոթից քարային զանգվածները յենթարկվում են սաստիկ ջեռուցման և դրանից ել լայնանում։ Գիշերը, յերբ ջերմությունը յերկրի յերեսին իջնում ե, նրանք արագորեն սառչում են ու սեղմվում։

Ամեն սի լեռնային տեսակ բաղկացած չե համասեռ
մասնիկներից, ուստի և նրա տաքանալն ու սառչելը տար-
բեր են։ Անհավասար լայնանալու և սեղմվելու հետևանքը
ճեղքվածքներն են։ Դրանց քանակն ու մեծությունն ան-
միջական կախումն ունեն կլիմայի ավելի կամ նվազ աս-
տիճանի ցամաքային լինելուց։ Վորչափ մեծ են ջերմու-
թյան և ցրտության տատանումները, նույնքան արագ և
ընթանում ե քայլքայումը։ Խիստ ցամաքային կլիմա ունե-
ցող յերկրներում մինչև անգամ կարելի յե լինում անմի-
ջապես դիտել նոր ճեղքումների յերեան գալը, վորոնք
հաճախ հայտնի յեն դառնում ուժեղ ճայթյուններով՝
նման թնդանոթի պայթյունի։ Սահարայում և, ընդհան-
րապես, անապատներում լեռնային տեսակների քայլքա-
յումը գլխավորապես տեղի յե ունենում իրար հաջորդող
տաքից ու ցրտից, տաքանալուց և ցրտելուց, ջուրտ կլի-
մայում կարեոր դերը կատարում ե սառնամանիքը։ Թա-
փանցելով ժայռի ճեղքերը՝ ջուրը սառուց ե կապում ու
լայնանում, զարգացնելով վիթխարի ուժ։ Յեթե չուզունե-
գունդը լցնենք ջրով և, բերանը պինդ փակելով, սառնա-
մանիքի տանք, ապա նա կճաքի։ Ճիշտ այսպես ել ճաք-
ճըքում, քայլքայվում են տմբողջ քարափներ։ Լեռներից
ցած վազող անձրեային հեղեղները, ավազաբեր քամին,
նույնպես նպաստում են քարային զանգվածների քայլքայ-
ման։ Այս բոլոր գործոնների համագործակցությամբ
ժայռերն աստիճանաբար մանր բեկորների յեն վերած-
վում։ Նրանց կատարները գեղանկար ձևեր են ստանում,
ինչպես այդ յերեսում ե 2 և 3 նկարներից, վորտեղ ցու-
ցաղը ված են գրանիտի, ավազաբարերի և կրաքարերի
ոդահար տիպիկ ձևերը։ Քայլքայված բեկորներն աստիճա-
նաբար գլորվում են ժայռի ստորոտը, և սովորաբար այդ-
տեղ մենք կարող ենք դիտել ահազին խճակույտեր, ման-
րունք, ցանուցիր քարատեսակը։ Յերբեմն տեղի յեն ունե-
նում ժայռերի ահազին, կարծես թե հանկարծական, կա-
տաստրոֆիկ վլվածքներ։ Փուլ ե զալիս լեռան նշանավոր

մի մասը, և նրա բեկորներն ահագին ավելամունք են դորձում իրենց ճանապարհին։ Սակայն նման փլվածքները ևս պատրաստվում են աստիճանաբար։ Շատ անգամ ճաքելուց կտոր-կտոր դարձած ժայռերը յերկար ժամանակ մնում են հանգիստ վիճակում, շնորհիվ նրանց ծածկող բուսականության։ Ծառարմատները, հյուսվելով իրար, կազմում են կուռ ցանց, վորով պահված մնում են ժայռը։ Յեթե վորեե պատճառից, որ., սաստիկ տարափներից և փոթորկից, բուսական այս ծածկոցը մնասված են կամ պոկ յեկած, ապա ժայռը, կորցնելով հենարանը, մեկենիմեկ փուլ են դալիս։ Այսպիսի փլվածքները հաճախ խորտակում են ամբողջ գյուղեր, կանգնեցնում գետերի ընթացքը և



Նկ. 3. Ավաղաքարի լեռների ողտնաբ կատարներ
Սաքսոնական Շվեյցարիայում.

հեղեղումներ առաջացնում։ Դրան որինակ կարող են ծառայել Ալպերի մի վիթխարի փլվածք, Հոլդառ գյուղի մոտ, վոր տեղի ունեցավ 1806 թ. սեպտեմբեր ամսում և տակովն արեց ամբողջ ծառաշարքեր։

Այս բուն մեքենայական պրոցեսների հետ մեկտեղ կատարվում են քիմիական ողահարություն, վոր առաջ են

բերում լեռնային տեսակի բուն նյութի փոփոխությունը *:
Նույնիսկ պարզ մաքուր ջուրը հեշտությամբ լվանում-
տանում է բոլոր լուծկեն մասերը։ Սակայն ջրի ներգոր-
ծությունը սովորաբար սաստկանում է ածխաթթվից, վոր
ջուրն առնում է ոդից, և վորը գոյանում է որգանական
յարմինների փտելուց ու այրվելուց։ Զուրը, վոր իր մեջ
պարունակում է ածխաթթուն լուծված վիճակում, կարող
է լուծել շատ ու շատ նյութեր։ Առանձնապես հեշտ
լուծվում է ջրից ածխաթթվական կիրը։ Ուստի և այն-
պիսի լեռնային տեսակներ, ինչպես կրաքարն ու գիլն
(մերգել) են, հեշտությամբ քայքայվում են ջրից։ Մինչև
անգամ խիստ տոկուն հանքեր, որ., այլ և այլ կայծքա-
րատներ (սիլիկատ), այսինքն կայծքարաթթվական բաղա-
դրությունները, դանդաղորեն փոփոխվում են ջրից։ Իբրև
որինակ բերենք ամենքին հայտնի գրանիտը, վորի կլո-
րուկ բեկորները հաճախ պատահում են, այսպես ասած,
կոպճաքարի տեսքով։ Լեռնային այս տեսակը կազմված է
յերեք տարբեր հանքերից։ Գրանիտի նոր կոտրած յերե-
սին ամենից առաջ աչքի յեն ընկնում վարդագույն, մսա-
կարմիր, մերթ ճերմակ, անկյունավոր մանրահատեր (դաշ-
տային սպաթ)։ Դրանց հետ մեկտեղ նկատվում են սև
թեփուկներ, փափուկ՝ յեթե դանակով կճպորվեն (փայլա-
րը—слюда) և, վերջապես, ապակու պես թափանցիկ ման-
րահատեր (կվարզ)։ Ամենից շուտ և առաջ ջուրն ազդում
է դաշտային սպաթի վրա. սա հետզհետե կորցնում է իրեն
հատուկ գունավորումը, պնդից փուխը է դառնում և փոխ-
վում սպիտակ կավի—կառլինի, վոր մաս-մաս տարվում է
ջրից։ Կվարզի թափանցիկ հատիկները և փայլարի սև թե-
փուկները դրանից հետո անջատվում են իրարից, և գրանիտն

* Քիմիայի համառոտ և հանրածանոթ դասընթացը տալիս է
պրոֆեսոր Դամմերի գիրքը՝ «Доступны опыты по химии» (քի-
միական մատչելի փորձեր) իմ խմբագրությամբ թագմանված և
իմ լրացումներով։ Հրատ. Ռ. Ն. Պապովայի. հանձնարարելի յե
լասսար-Կոնի գեղեցիկ գիրքը՝ «Химия в обыденной жизни»
(քիմիան առօրյա կյանքում) վարպետորեն գրած։ Հրատ. Ա. Ն.
Դեվրիենի.

ամբողջովին փուլ ե գալիս՝ ավազ կտրում։ Այսպես ել քայքայվում են լեռնային մյուս տեսակները։

Սակայն յեթե դաշտասպաթը զետեղենք լիքը ջրով անոթում, և ջուրը հագեցած լինի ածխաթթու գաղից, ապա վոչ մի փոփոխություն չենք նկատիլ։ Վորպեսզի այդ բանը տեղի ունենա, պետք ե ժամանակ և ջրային խիստ մեծ զանգվածներ։ Թե մեկից և թե մյուսից անսահման չափերով ունի ընությունը... Մինչև վերջին ժամանակներս ել, լաբորատոր փորձերի հիման վրա, ընդունում եյին, վոր կայծքարատների* (սիլիկատ) մեծագույն մասը չի յենթարկվում փոփոխությունների։ Այնուամենայնիվ Յուրյեի համալսարանի պրոֆ. հանգուցյալ Լեմբերգ և նրա աշակերտ դոկտոր Տուգուտ իրենց հոյակապ փորձերով ցույց տվին, վոր բարձր աստիճանի ճնշմամբ, բարձր տեմպերատուրայով և յերկար ժամանակի ընթացքում կայծքարատները յենթարկվում են ածխաթթվական աղերի (որ., սոդան կամ կալիոնը) չափաղանց թույլ լուծվածքների և մինչև իսկ զտված ջրի աղղեցության։

Պրոֆեսոր Լեմբերգի ասելով, ջուրը լուծում ե անպայման ամեն ինչ, «նույնիսկ վոսկին ու արծաթը»**, Դրա համար անհրաժեշտ են ջրի ահագին զանգվածներ և յերկար ժամանակ։ Չունենալով այնպիսի քանակներով ջուր գործ դնելու հնարավորություն, ինչպես ոգտագործում ե ընությունը, մեր լաբորատորիաներում մենք

* Ծ. թ. — Կայծքարատներ կոչվում են այն հանքերը, վորոնք առաջանում են կայծքարաթթվի (կայծքարի և թթվածնի միավորության) և մետաղոքսիդի (մետաղի և թթվածնի միավորության) բաղադրությունից։

** Հետաքրքիր ե վոսկու ներկայությունը ծովերի և ովկիանոսների ջրերում։ Նրա ներկայությունը ջրի մեջ առաջին անգամ հաստատեց պրոֆ. Զոնշտադտ 1872 թ.։ Նորվեգիական Փիորդների (նեղ և ցամաքի խորքը թափանցած ծոցեր) ջրերի անալիզները, վոր կատարվեցին 1872 թվին, ցույց տվին, վոր այստեղ ջրի մեջ գտնված վոսկու քանակն արժանի յե գործնական ուշադրության — մի տոնն ջրում նա գտավ մոտ 5 միլիգրամմ մետաղ կամ 1000 փթի մեջ մոտ 2 դոլիա։ Պրոֆ. Դ. Ի. Մենդելեյև գրում է հետեւյալը իր «Քիմիայի հիմունքները» գրքում. «Ինձ թվում ե, վոր ժամանակի ընթացքում կդժնվեն միջոցներ՝

Նրանց տեղ գործ ենք դնում բարձր աստիճանի ճնշում
և բարձր տեմպերատուրա։ Սակայն շատ հավանական է,
վոր նման բացառիկ պայմաններում մեր առաջացրած
փոփոխություններից շատերը կատարվում են բնության
մեջ իրենք իրենց ամեն քայլափոխում։

Կայծքարատների քիմիան դեռ ապրում է իր մանուկ
հասակը, սակայն պրոֆ. Լեմբերդի յերկարամյա աշխա-
տանքներն անհետ չեն անցնիլ։ Գիտության այս մանուկ
ճյուղը, վաղ թե ուշ, ձեռք կրերի դորձնական ահազին
կարեորություն է, կարող ե պատահել, վոր նա նույնքան
ահազին նշանակություն ստանա գյուղատնտեսության
մեջ, վորքան քիմիան ունի դորձարանային արդյունաբե-
րության մեջ։ Հողի կազմը կարտահայտվի ճիշտ ֆորմու-
լաներով, իսկ նրա մեջ տեղի ունեցող փոփոխությունները՝
քիմիական հավասարություններով։ Արդեն ներկայումս
պրոֆ. Լեմբերդի փորձերը բերին մի վերին աստիճանի
կարեոր յեզրակացության—վերջնականապես պարզեցին
այն բաղադրությունների ծագումն ու բնույթը, վորոնցով
պայմանավորվում է «հողի կլանող ունակությունը»։ Ի՞նչ
ունակություն է այդ։


Հստ եյության, կայծքարական թթուների բոլոր բա-
ղադրությունները, վորոնք ամենահայտնի մասնակցություն
ունեն լեռնային տեսակների կազմության մեջ, հանդում են

ձեռնուու կերպով մեկուսացնելու վոսկին ծովային ջրից, հաղորդ
դարձնելով այն այնպիսի նյութերի, վորոնք իրենց վրա վոսկի
յին կապում։ Բայց վորովհետեւ ովկիանոսի ջրի ընդհանուր քա-
նակը կարելի յե ընդունել մոտ 2.000.000.000.000.000.000 տոնն,
ուստի և վոսկու պաշարը նրա մեջ մոտ 10,000 միլիոն տոնն է,
իսկ ամբողջ յերկրագնդի վրա մի տարում ստացվում է վոչ ավե-
լի քան 700 տոնն վոսկի։ Յենթադրում են, վոր ծովային ջրում
վոսկի կա յոդ ունեցող մետաղների ներկայության շնորհիվ, վո-
րոնք որդանիղմների ներդործությունից կարող են մեկուսացնել
բուն յոդը։ Տես Բրաունի գեղեցիկ գիրքը՝ «Հանքային թագավո-
րություն», թարգմանություն Վ. Ն. Լիմանի, Ա. Պ. Նեչայևի և
Պ. Պ. Սուշինսկու լրացումներով, Ա. Ա. Խնաստրանցեի խմբա-
գրությամբ։ Հրատ. Ա. Ֆ. Դեվրիենիւ

Իրենց հիղթատացիային—ջրի հետ միանալուն *։ Նման ջրային միավորությունների շարքում, անկասկած, ամենահետաքրքիրը հանդիսանում են այսպես կոչված ցեղիտները, հատուկ կայծքարատներ, վորոնք գտնվում են ամեն մի հողում։ Իրենց կազմությամբ սրանք շատ մոտ են դաշտային սպաթներին, բայց տարբերվում են վերջիններից նրանով, վոր պարունակում են իրենց մեջ ջուր և հեշտությամբ յենթարկվում են փոփոխության աղային թույլուծվածքների ազդեցությունից։ Նրանք կլանում են բռնական կյանքին անհրաժեշտ նյութերը և ապա աստիճանաբար տալիս հողի մեջ շրջող ջրին, վոր ունի իր մեջ ածխաթթու։ Դրանից ե, վոր, որ., կալիոնային աղերի լուծվածքները, հողով անցկացնելուց հետո, փոխվում են իսկույն ևեթ. բույսին անհրաժեշտ կալիոնը պահվում է հողում։ Նրա փոխարեն լուծվածքում մենք գտնում ենք նատրիոն, վոր մնասակար ե բռնական տեսակների մեծամասնության համար։

Այսպիսով, քիմիական ողահարման բարդ պրոցեսների շնորհիվ, մանրացած լեռնային տեսակն ստանում ե բույսերի զարգացման նպաստավոր հատկություններ—նապահում, սեեռում ե իր մեջ այն նյութերը, վորոնք անհրաժեշտ են նրանց կյանքին։ Հասկանալի յե, վոր հողի ողահար հանքային մասը թե իր կազմով և թե իր հատկություններով տարբերվում ե իր տակն ընկած լեռնային տեսակից։ Վերջինիս վորոշ բաղկացուցիչ մասերը հողից ծծվող ջրով լվացվել տարվել են, և յուսներն՝ իրենց նախնական հատկությունները կորցնելու չափ փոխվել... Վերև ասածներից մենք գիտենք, վոր լեռնային տեսակների պրոցեսում կարեոր դերը կլիմային ե պատկանում։ Յեվ, իրոք, բազմաթիվ դիտողություններ ցույց տվին,

* Հանքերի կյանքի և փոփոխությունների մասին տես Գ. Պետերսի «ԿТО ГОВОРЯТ КАМНИ» (Ինչ են ասում քարերը) գիրքը՝ գերմաներենից թարգմանած Ա.Պ. Նեշայեի լրացումներով յերկրաբանության և հանքաբանության վերաբերյալ, պրոֆ. Ա.Ա. Ինտառանցեկի առաջաբանով։ Հրատ. Ա. Ֆ. Դեվրինի։



Վոր կլիմայական յեվ ջրագիտական նման պայմաններում ամենաայլասեռ լեռնային տեսակների ողահարման մնացորդներն իրար նման են դուրս գալիս,—ուրիշ խոսքով,— տվյալ ֆիզիկա-աշխարհագրական շրջանում, հողի հանքային կազմն ավելի կամ նվազ չափով միասեռ ե, կամ, համենայն դեպս, ընորոշվում է միատեսակ բաղադրություններով։

Բացի ողահարման պրոցեսսներից հողի կազմակերպության մեջ կարեոր դեր ունեն բույսերը։ Անգամ մերկ ժայռերը չեն կարելի անպայման բուսազուրկ համարել։ Հողն իսպառ բացակայելիս ել նրանց վրա յերեան են դալիս քարաքոսներ (լիշայնիկ)։ Դրանք բուսականության ծիծեռնակներն են։ Իրենց հյութերի մեջ պարունակված բավականաչափ թթվաշուկային թթուների ($50^0/0$) շնորհիվ նրանք հեշտությամբ ուտում են լեռնային տեսակները և դուրս բերում նրանց միջից վորոշ հանքային նյութեր։ Ինքնայրումից նրանք տալիս են փտանյութ, վորի և լեռնային տեսակի ողահար մասի խառնուրդից գոյանում ե հողի բարակ շերտ։ Դրա մեջ արդեն կարող են արմատակալել ավելի խոշոր, սակայն դեռ վոչ պահանջկոտ, բուսական տեսակներ, ինչպես, որ., ցախի կոչված թուփը։ Բոլոր այս տեսակ բույսերի արմատներն ազդում են վոչ միայն քիմիապես, այլ սողոսկելով լեռնային տեսակի ամենաանձուկ ճաքերը, հետզհետե ավելի ու ավելի լայնացնում են նրանց։ Սրանցից ավելի ուշ դուրս յեկող ստվար բույսերի արմատները պոկոտում ցած են բերում ամբողջ քերծեր անգամ։ Անտառոտ կիրճերում նման քայլայումների մի որինակի չե, վոր մենք պատահում ենք։ Սեպածե բեկորները մեկուսանում են ուղղաձիգ խորխորատներից և կախվում ողի մեջ։ Շատթե քիչ ժամանակից հետո նրանք անպատճառ պետք ե ընկնեն։ Այս բեկորներն իրարից զատող ճեղքերից դուրս են գալիս ծառեր։ Նրանց արմատներն անընդհատ տքնում են լայնացնել ճեղքերը և նախապատրաստել վլվածքներ։ Մանր բույսերը, ցախին, բարաքոսները, մամուռը առա-

Հացնում են փոքր փոփոխություններ, բայց գործելով
ահազին բազմությամբ, նրանք սակավ առ սակավ խար-
խըլում են լեռնային տեսակները և այդպիսով նպաս-
տում նրանց կապելու մի հողաշերտ, վորի մեջ կարող են
արդեն բնակավորվել բուսական ավելի բազմատեսակ պա-
հանջկոտ տեսակները։ Հենց վոր բուսականությունն
զգեստավորում ե ժայռը միապաղաղ շերտով, նրա քի-
միական ներգործությունն ստանում ե ահագին ուժ։ Նրա
մեռուկ, թափթփած մասերը, քայքայվելով ողի ազատ
շփումից, արտադրում են ջուր և ածխաթթու, վորոնց դե-
րը լեռնային տեսակների ողահարման մեջ արդեն մեզ
հայտնի յեւ իսկ յեթե բուսական մնացորդները կուտակ-
վում են մեծ քանակությամբ, ապա նրանց արագ քայ-
քայումը դառնում ե անհնարին։ Կատարվում ե դանդաղ
քայքայում, առաջացնելով վոչ միայն ջուր և ածխաթթու,
այլև մի ամբողջ շարք որգանական բաղադրություններ,
իմիջի այլոց այլ և այլ թթուներ, վորոնք ներգործում
են իբրև ուժեղ լուծորդներ և նպաստում հողի հանքային
մասերի փոփոխության շարունակման։ Այս փտած բու-
սական մնացորդներն առաջացնում են որգանական բա-
ղադրությունների մի բարդ խառնուրդ, վոր կոչվում ե
բուսական փտանյութ—հումուս։ Հողի բաղկացուցիչ կարե-
վոր մասը հանդիսանում ե հումուսը և տալիս նրան շատ
կամ քիչ մութ գունավորում։ Ամեն տարի հումուսի մի
մասը վոչնչանում, ոքսիդանում ե։ Սակայն այս վոչն-
չացած մասի փոխարեն գոյանում ե նորը բուսական
մեռուկ մասերից։ Մատղաշ հողերն աստիճանաբար են
հարստանում փտանյութով։ Կազմակերպված հողերի փտա-
նյութի մուտքն ու յելքն արդեն հավասարակշռված ե և
հողի յուրաքանչյուր տիպիկ տեսակի համար նրա քանա-
կըն ավելի կամ պակաս մշտական ե լինում։

Հողակազմության պրոցեսսների ամենամատչելի ձեւ
կարելի յեւ դիտել հին շինությունների տանիքներին, վոր-
տեղ, քարաքոսներից ու մամուռից հետո, յերեսում են խո-

տերը, իսկ մեկ-մեկ ել բողբոջ են տալիս ծառատեսակ-ների սերմերը, որ., թղտենու։ Բուսականության հետ մեկտեղ յերեան են գալիս և հողերը։ Փայտաշեն տանիքներին հողի հանքային մասը գոյանում ե այն նյութից, վոր քամին ցածրից վեր ե հանում։

Վերջին ժամանակներս պարզվեց միկրոօրգանիզմների նշանավոր դերը, վորով առաջ են գալիս հողում ամենաբազմազան ֆիզիկո-քիմիական պրոցեսներ։ Այսպես, որ., հողի կարեռագույն մասերից մեկը—բորակը, վոր պարունակում ե իր մեջ բույսերին անհրաժեշտ ազոտը, գոյանում ե ամմիակից * և ամմիակային բաղադրություններից շնորհիվ մի առանձին միկրոօրգանիզմի գործունեյության, վոր ստացել ե բորակաբակտերիա (նիտրոբակտերիա) անունը։ Բորակացման (նիտրիֆիկացիայի) պրոցեսի կենսաբանական բնույթը պարզեցին Շլեզինգը և Մյունցը 1877 թվին, իսկ նիտրոբակտերիաների մշակույթն անաղարտ վիճակում ստացավ Պաստերի լաբորատորիայում ոռւս գիտնական Ա. Ն. Վինագրադսկին, վորի աշխատանքները բոլոր մանրամասներով բացատրեցին բորակացման ** պրոցեսը։ Հիմք կա կարծելու, վոր այս միկրոօրգանիզմն ընդունակ է մինչև անգամ ողից անմիջապես առած ազոտը դարձնել բորակատ *** (նիտրատ)։ Բորակաբակտերիաների ներկայությունը, համենայն դեպքու, բոլորովին մերկ ժայռերի վրա ասլացուցված ե։ Յերեան գալով այստեղ անհամար բազմությամբ, խցկվելով ամենաանձուկ ճաքերի մեջ, նրանք, հավանորեն, նույն ազդեցությունն են գործում, ինչ քարսքուներն ու մամուռները։ Յենթագրություն արին, վոր Բերնի սարահարթում թառլիորնի քայլքայումը, բացառա-

* Ամմիակը գազ ե, վորի լուծվածքը գործածության մեջ անուշադրի վոգի անունն ունի։ Տես Դամմեր «Доступные опыты» (Մատչելի փորձեր)։

** Տես դոկտոր Յարոցկու հողվածը՝ «О жизни в почве» (Կյանքը հողում)։ Մир Божий, յանվ. 1903 թ.

*** Ծ.թ. Բորակատ (բորակաթթվական աղ) ասվում են մետաղոքսիդի և բորակաթթվի միավորությունից առաջացած հանքերը։

պես միկրոսորգանիզմների գործն եւ Շատ կարելի յե, վոր լեռնային տեսակների նշանավոր զանգվածների քայլայումն ու մանրացումը վերազրելու յե հենց բորակաբակտերիաների աննկատելի աշխատանքին:

Բույսերի հետ միասին կենդանիները նմանապես ակընհայտնի մասնակցություն են բերում հողակազմության պրոցեսուին: Հատուկ ուշադրության արժանի յե անձրևային վորդերի գործունեյությունը: Արանք շատ հետաքրքիր և ուսանելի լուսաբանություն ստացան այն որից, յերբ հոչակավոր բնագետ Դարվինն իր հետազոտությունները կատարեց: Դեռ 1837 թվին Դարվինը նկատեց, վորդաշտի յերեսին ցրիվ տված պարարտանյութը միառժամանակից հետո յերեան յեկավ հողի փխրուն շերտի տակ: Հողամասերի այս տեղափոխությունն արդյունք եր վորդերի գործունեյության: Նրանց կենցաղի հետագա դիտողությունները տվին չափազանց հետաքրքիր ու կարևոր յեղակացություններ:

Վորդերն ապրում են ուղղահայաց և թեք ընկած հողաբներում: Չորուկ հողում և տարվա ցուրտ յեղանակին նրանք ցած են իջնում մինչև 7—8 վոտնաչափ խորը, իսկ տարվա տաք յեղանակին, յեթե հողը խոնավուել ե անձրևներից, գետնի յերես են գուրս զալիս: Բույսերի թարմ և թոշնած տերեները, կենդանական պեսալես մնացորդները և մինչև իսկ իրայինների դիերը դառնում են նրանց կերակուր: Հաճախ կարելի յե տեսնել, թե ինչպես վորդերն իրենց բնիկներն են քաշում թափթփված տերեները, վորոնց ծայրերը նրանցից դուր ցցված, փակում են թշնամիների մուտքն այնտեղ (որ., բազմոտանիները): Բնիկներ փորելը կատարվում է յերկու կերպ. կամ վորդը խցկում է իր բերանի բարակ ծայրը հողի մասնիկների միջև և փքելով վորկորը, անցք ե բացում, կամ թե չե հողի մասնիկները կուլ ե տալիս և մարսողական աղիքով արտաթորում ե հողի յերեսը: Անձրևից հետո, յերբ վորդերը փորփումներ են անում հողի յերեսին մոտիկ, նրա վրա մնում են բազմաթիվ հողակույտիկներ՝ յերկարուն և կլոր, իրար

կպուկ, հատիկների տեսքով։ Նրանց բարձրությունը մոտ մի սանտիմետր է։ Ամեն մարդ ել նկատած կլինի նման հողակույտիկներ այգիներում, բանջարանոցներում և դաշտերում։ Նրանց գոյությունը մշտնջենավոր չե։ առաջին իսկ անձրեկից նրանք վողողվում տարվում են բավականաշափ հեռու տարածություններ։ Այսպիսի հողոտ կղկղանքներով ևս սփովում ծավալվում են վորդերի բնիկները։ Մարսողության գործարանում հողի կուլ տված մասնիկները յենթարկվում են փոփոխության։ Նախ և առաջ նրանք շփվում, մանրահող են դառնում, վորին նպաստում են կուլ տված մանրախճի ու ավազի հատիկները, բացի դրանից, չլուծված որգանական մնացորդների քիմիական փոփոխություն ե կատարվում—նրանք դառնում են փտանյութ։

Այսպիսով վորդերը նպաստում են, վոր վոչ միայն հումուս կուտակվի, այլև հողի հանքային մասերը մանրանան, և հողն ել ամենից լավ իրար ընկնի։ Բացի դրանից, հողի մեջ բազմաթիվ ծակոտիներ բացանելով, նրանք դրանով դյուրացնում են ողի ու խոնավության մուտքը առավել խոր շերտերը և, ուրեմն, նպաստում են քիմիական ողահարման։ Խարխլելով հողն ու իրենց կղկղանքները յերեսն անելով, նրանք նպաստում են յերեսի քարերի նստելուն և հողոտ շերտով ծածկվելուն։ Դրա հետ միասին բույսերի արմասներն ել, հանդիպելով վորդերի ճանապարհներին, ավելի հեշտությամբ խորն են թափանցում, մանավանդ պինդ հողերում։ Այսպիսով վորդերն արորում են հողը միքանի բերան, պարարտացնում են և մաքրում յերեսի սառցաբեր քարերից՝ հողի տակն անելով նրանց։ Հետաքրքիր են վոյլնիեյի փորձերը, վոր բույսեր եր սնուցանում հողամանների մեջ։ Դրանցից միքանիսի մեջ նա վորդեր դրեց, իսկ մյուսներին՝ վոչ։ Դուրս յեկավ, վոր առաջիններում բույսերը զարգանում եյին ավելի լավ։

Վորդերի գործունեյությունն ահազին չափերի յե հասնում։ Նրանց հողոտ վորձկումների տարեկան քանակը յերբեմն այնպիսի նշանավոր ծավալի յե հասնում, վոր

յեթե բաց անենք գետնով, կստանանք $\frac{1}{10}$ մատնաչափ հաստության հողաշերտ, մինչև անդամ ել ավելի: Դանիայի աճարի անտառներում մի հեկտար (1 հեկտ. $=\frac{9}{10}$ դես.) հողի վրա հաշվում են 1 միլիոնի չափ վորդաբուն: Վերնաշերտը կազմված է համարյա թե միայն թորուկ հողակույտիկներից՝ մինչև մի մատնաչափ խորության: Այսպիսով ձիգ ժամանակներում վորդերն առաջացնում են հողի մեջ ահագին և կարեռ փոփոխություններ: Բայց և այնպես նրանց գործունեյությունը յերևան է գալիս և զանազան կերպով, նայած պայմաններին: Ամենից ավելի սիրով նրանք բնակություն են դնում այն հողերում, վորոնք բավականաչափ խոնավ ու ստվերոտ են, և վորտեղ բավականաչափ սնունդ են գտնում: Մեր կլիմայական գոտում վորդերն ամենից շատ հանդիպում են ծառուտ զբոսարաններում (պարկ), այդիներում, միքանի անտառուտ և խոտավետ հողերում, նաև տեսական յերաշտներից զերծ վարելահողերում: Վորդերն ավելի սակավ են ավազոտ և ճահճոտ հողերում և չորուկ տափաստաններում:

Վորդերի գործունեյությունը բացառիկ չափեր ե ընդունում տաք ու խոնավ և, մանավանդ, արևադարձային յերկրներում, վորտեղ իրենք վորդերը ևս մեծ-մեծ են: Ֆրանսիայի հարավում կան վորդեր, վորոնք դուրս են տալիս կղկղանքների կույտեր մինչև 2 և, նույնիսկ, 3 մատնաչափ բարձրության: Արևելյան Հնդկաստանում հայտնի յեն վորդերի տեսակներ՝ մինչև 2 վոտնաչափ յերկարության, վորոնց վորձկած հողը հասնում է $\frac{1}{8}$ վոտն: Արևմտյան Աֆրիկայի նիգեր գետի ավազանում տեղեր կան, ուր հողը մի գլուխ ծածկված է վորդերի հողոտ կղկղանքներով: այդ կիսուկների բարձրությունը $6-8$ սանտիմետր է: Անձրևներից վողողվելով, նրանք տալիս են մանրահողի ամենաարգավանդ շերտը: Այստեղ հողը փորփրոտած է $\frac{1}{2}$ մետր խորության չափ անհամար ուղիներով ու բներով: Մադագասկար կղզու վրա կենում ե վորդի մի աժդահա տեսակը (Geophagus Darvini) 1 մետր

յերկարության և 1—2 սանտիմետր հաստության։ Նա իր բունն է քարշ տալիս մեծ չափով տերևներ, ճյուղորայք, ամբողջ բույսեր և կլանում հողն ահազին քանակությամբ։ Դրա կենդանի մի որինակը դուրս տվեց իր աղիքատնից $\frac{1}{2}$ ժամվա մեջ 100 գրամմ գաղջ հող։ Հիսուն տարվա ընթացքում այս վորդը վերամշակում է այնքան հող, վորից յեթե միապաղաղ մի հողաշերտ կազմվեր, նա կունենար մինչև մեկ մետր հաստություն*։

Ակնհայտնի դեր կատարում են հողակազմության պլոցեսում այլ և այլ միջատներ։ Նրանք մատակարարում են հողին աղոտային մնացորդներ, հողի մասնիկների մեքենայական փոխադրություն կատարում և մանրացնում կոշտուկ հումուսը։ Միքանի մըջյուններ (Lasius termitus) կառուցանում են հողաբներ, յերբեմն այնքան կողք-կողքի խցկված, վոր 1 քառ. վերստի վրա նրանց թիվը 20 հազարից անցնում է, ինչպես այդ դիտել ե Գարդյագինը կրասնոուֆիմսկի շրջակայքում։ Մեր անտառային մըջյունները, կուտակելով մի տեղում փշերի ու վոստերի ահազին պաշար և նրանցից հազար ու մի անցուդարձով բնակարաններ շինելով, նպաստում են այդ բուսական մնացորդների ավելի արագ քայլայման և անտառային փտանյութի կուտակման։ Շատ հողաթմբեր վոչ այլ ինչ են, յեթե վոչ նստած ու խոտակալած մըջնաբներ։ Արեվադարձային յերկրներում մըջյունները չափազանց արագությամբ մանրունք ու փոշի յեն դարձնում ամբողջ ծառաբներ։ Ուրիշ տեսակի մըջյունները նույն աշխատանքն են կատարում։ Դանիայի աճարի անտառների մեջ պատահում է փափուկ ու փիրուն, դրեթե մանրամաղ, փտանյութ, վոր առաջացրել են սարդերը և այլ միջատները՝ մանրացնելով տորֆը։ Տեղ-տեղ ել հողերում բնակություն են դրել բազմոտանիները։ Միության կղզում նրանք բռնում են անձրևային վորդերի տեղը, Յերևան

* Տես Ն. Մ. Սիրիոցի, «Почвоведение» (Հողագիտություն), II տալ., 176 եջ։

դալով անհամար քանակությամբ, նրանք խժողում են թափ-
ված տերևները, վոչնչացնում են գետնին մեկնված ծառա-
բները և պարարտացնում հողն իրենց թողարած մարմնա-
մաշկով ու կղկղանքներով։ Միջատների թթուրները մի-
մի ժամանակ ահագին ազդեցություն են անում. յերբեմն
մի դեսիատինի վրա հաշվում են մինչև 5 միլիոն թթուր։

Վողնավոր կենդանիներից ամենամեծ դերը հողակազ-
մության մեջ կատարում են այլ և այլ գետնափորներ,
ինչպես են, որ., գերմանիկ մուկը (хомяк), արջամուկը
(сурок), պոնտական մուկը (суслик), կուրամուկը (слепец),
գետնաբնակ նապաստակները, մկները, խլուրդները և ու-
րիշները։ Նրանց գործունեյությունն արտահայտվում ե-
նրանով, վոր խորխատում են հողն իրենց բներով կամ
ստորերկրյա ուղիներով, փխրացնում հողային զանգվածը,
կազմում նրա յերեսին հողի կիտուկներ և թմբիկներ,
դուրս են գցում հողը տակից վերև, լցնում իրենց ճա-
նապարհները հողով կամ սրա և ստորհողյա շերտի խառ-
նուրդով։ Բացի դրանից, կենդանիները թողնում են հողի
ներսում իրենց դիակներն ու կղկղանքները, վորոնցից գո-
յանում ե փտանյութ։ Ահագին ե սրանց դերը հողակազ-
մության մեջ Որուսաստանի տափաստանային շերտում։
XII և XIII դարերում Հարավյան Որուսաստանում բազ-
մաքանակ խմբերով արջամկներ եյին յերեան գալիս։ Նրան-
ցից հետո մնացին բազմաթիվ «գերեզմանոցներ», այսինքն
արջամկների խումբ-խումբ հողաթմբեր։ Յեկատերինասլավի
նահանգում տեղ-տեղ դեռ այժմ ևս կարելի յե հանդիպել
տափաստանի կույս հողաբաժինների կամ հնուց պառկած
հողերի, վորոնց մակերեսույթն ամբողջապես ալիքածե ե.՝
այնքան բազմաթիվ են այստեղ արջամկների նստած բլրակ-
ները։ Ներկայումս այդ կենդանիների ծավալումը խիստ
նվազել ե. Ընդհակառակը, պոնտական մկների կամ ձորա-
մկների (օբражօկ) քանակն ահագին ե. Կան տեղեր, վոր-
տեղ 1 քառ. վերստի վրա վոչնչացնում են մինչև 12 հա-
զար պոնտական մկներ։

Գետնաբնակ կրծողների դուրս տված հողի ծավալը
յերբեմն հասնում է ապշեցուցիչ չափերի։ Պրոֆ. Վերնադ-
սկին Յեկատերինասլավի նահանգում դիտել է տեղեր,
ուր այս կենդանիների նստած բլրակները բռնում են վողջ
մակերևույթի մոտ $\frac{1}{10}$, իսկ յերբեմն մինչև $\frac{1}{2}$ ։ Մի քառ.
վերստին ընկնում է մինչև 15.000 հողաթմբիկ, վորոնց
ընդհանուր ծավալը հասնում է 200 խոր. սաժենի։ Դեռ
առավել ապշեցուցիչ է հանգուցյալ պրոֆ. Ի. Վ. Մուշկե-
տովի դիտողությունների արդյունքը Հաշտարխանի նահան-
գի Ղալմուխական տափաստաններում։ Այստեղ միլիոնավոր
պոնտ. մկներ են կենում։ Տասնյակ, նույնիսկ հարյուրա-
վոր վերստեր մակերևույթն ունի փոքրիկ բարձրություննե-
րի խայտաբղետ տեսք. Նա ամբողջապես ծածկված է տափակ
կոնուսակերպ բլրակներով։ Դուրս տված հողի զանգվածը
1 քառ. վերստի վրա հասնում է 2—3000 խոր. սաժենի։

Ասածներից յերեսում ե, վոր կենդանիների գործու-
նելությունն, իբրև հողակազմության պրոցեսս, բարենը-
պաստ պայմաններում հանդիսանում է չափազանց կարե-
վոր։ Այսուամենայնիվ, փտանյութով (հումուս) հողը հա-
րըստացնողը և նրա կազմության զլխավոր գործոնը
բույսերն են։ Բացառակի զարգացման և գերիշող ծա-
վալման պայմաններում բուսականության տարբեր տե-
սակները տարբեր ազդեցություն են գործում և պայմա-
նավորում հողերի վորոշ կառուցվածքն ու կազմը։ Մնունդ
գտնելու համար ծառերն իրենց արմատները շատ խորն
են ձգում և սփռում ահագին տարածություններ, ուստի և
չեն կարող նպաստել փտանյութի բավականաչափ կու-
տակման։ Ճշմարիտ ե, թափված ճյուղերը, վոստերը,
տերևներն ու փշերը կազմում են անտառանյութի հաստ
մի ծածկոց, — նրա տարեկան ավելցուկը հասնում է դե-
սիատինին 270 վիթի, — այնուամենայնիվ, անտառի առատ
խոնավությունից և ողի ազատ շփումից, արագ ու լիովին
ինքնայրման յենթարկվելով այդ ծածկոցը չի տալիս
փոքրիշատե բավականաչափ բուսական փտանյութ։

Մյուս կողմից,—կազմելով նոսր արմատացանց, վոր զանազան ուղղությամբ ճեղքատում են հողը,—ծառերը դարձընում են հողը խիստ ծակոտկեն և նպաստում, վոր նաբազմանիստ ձևեր ընդունի, վորոնք ժողովրդի մեջ հայտնի յեն «Ճղոպըրահողեր» (օրехի) անունով։ Դրանից ստացվում են հողի բնորոշ ճղոպըրածն կառուցվածքը (Նկ. 4): Այլ կերպ



Նկ. 4. Անտառային հողի հատված, իր բնկուղածն կառուցվածքով.



Նկ. 5. Տափաստանային հողի հատված, իր մանրահատ կառուցվածքով.

Են ազդում խոտաբույսերը: Ճշմարիտ են, նրանց գետներեսի մասերը նմանապես չեն կարող տալ մեծ քանակությամբ փտանյութ—հումուս, բայց նրանց արմատները, կազմելով հյուսվեն ամենանուրբ ցանց՝ ներկայացնում են բուսանյութի ահագին պաշար, վորը, տափաստանային շրջանի չորության պատճառով, չի կարող դյուրին կերպով քայքայվել, ուստի և առատորեն հողին փտանյութ ե մատակարարում: Նուրբ արմատացանցի շնորհիվ հողի որգանական և հանքային մասերը լավ խառնվում են իրար, և ստացվում են կրկին հողի նույնագիտ մանրահատ կա-

ռուցվածք (տես նկ. 5): Իր հերթին այս կառուցվածքը դանդաղ ընթացք եւ տալիս արմատացանցի ինքնայրման, վորովհետև իսպառ փակում եւ ողի ազատ մուտքն այնտեղ: Այս պատճառով տափաստանային հողերը լինում են անհամեմատ ավելի միատեսակ, քան անտառայինները և փտանյութի պարունակությամբ գերազանցում են նրանց: Այսպիսով բուսականության բնույթը վորոշում եւ հողի կազմն ու կառուցվածքը, ուստի և տվյալ ֆիզիկո-աշխարհագրական շրջանի սահմաններում, ուր վորոշ բուսական տեսակներ գերիշխող ընույթ ունեն, հողերը յեզս պետք ելինեն ավելի կամ պակաս միատեսակ: Կենդանիներն իրենց գործունեյությամբ չեն խախտում այս միորինակությունը, պատճառ վոր, նրանք ել, տարածվելիս, հարմարվում են վորոշ ֆիզիկո-աշխարհագրական շրջաններին: Այսպես, որ., վորդերի գործունեյությունը մեծանում է, քանի հասարակածին ենք մոտենում. գետնափոր կենդանիների բնորոշ բնակավայրը տափաստաններն են. մըջյուններն իրենց աշխատանքը յերեան են բերում գլխավորապես անտառային շրջաններում, և այլն:

Վերևում մենք տեսանք, վոր հողակազմության մեջ այնքան կարևոր դեր խաղացող ողահարման պրոցեսսները սերտ կապ ունեն կլիմային: Սակայն կլիման ունի նշանակություն ինքնըստինքյան: Հատկապես կարևոր են հանդիսանում մթնոլորտային տեղումների քանակը և բուսաճեցության (վեգետացիոն^{*}) շրջանի տկողությունը: Այսպես, որ., Ռուսաստանի հարավ-արևելքում, ուր խոնավության սաստիկ պակասությունից ջերմության և լուսի առատություն են նկատվում, վորտեղ ամառը յերկար է, իսկ ձմեռը՝ կարճ, փտանյութը պետք եւ կիտվի խիստ դանդաղ: Այստեղ նրա տարեկան մուտքը գրեթե հավասար է յելքին, ուստի և հողը բնորոշվում է նրանով, վոր քիչ որդանական մասեր և թույլ գունավորում ունի:

* Վեգետացիոն կոչվում եւ այն ժամանակաշրջանը, վորի ընթացքում տվյալ շրջանը ծածկված եւ բուսականությամբ: Նրա տեսողությունը կախված է ամառվա տևողությունից:

Մյուս կողմից խոնավության պակասությունը նպաստում է, վոր հողում մթերքեն լուծկեն բաղկացուցիչ մասեր, դրանց թվում մինչև իսկ կերակրառադր: Ընդհակառակը, Ռուսաստանի հյուսիսում, վորտեղ լայն չափերով լճեր ու ճահիճներ տարածված լինելով, գոյություն ունի չափից ավելի խոնավություն, փտանյութի տարեկան մուտքը գերակշիռ ե յելքից, ուստի և այստեղ մութ գույնի ճահճային հողերը տարածված են բավական ընդարձակ չափերով: Այստեղ լուծկեն աղերի կուտակում անկարելի յե բոլորովին: Ծայրահեղ հյուսիսում, վորտեղ ամառը կարճ է, և բուսականությունը յերկար ժամանակ չի ծածկում գետնի յերեսը, հողակազմության պրոցեսներն արտահայտվում են թույլ, և այստեղ մենք հանդիպում ենք հողերի, վորոնք լիովին կազմակերպված չեն: Վերջապես՝ չոր, կոնտինենտալ կլիմայի յերկրներում, ամենամոտ հարեան անապատների մեջ փոշու ահագին զանգվածներ բերող քամին իր գործունեյությամբ հայտնի մասնակցություն ե ունենում հողակազմության պրոցեսում: Մի խոսքով՝ հողի հատկությունները սերտ կապված են յերկրի կլիմային, — այս պատճառով ել տվյալ ֆիզիկո-աշխարհագրական շրջանի սահմաններում, վորտեղ կլիմայական պայմանները մնում են մշտական, հողի հատկությունները յեվս ավելի կամ պակաս միատեսակ պետք ե լինեն:

Հողի ծագման պայմանների ծանոթությունը բերում է մեզ վերին աստիճանի կարեոր մի յեզրակացության: Հողի կազմը, կառուցվածքը, գույնը և, ընդհանրապես, բոլոր գլխավոր հատկություններ վորոշողն այն ընդհանուր պայմաններն են, վորոնք իշխում են տվյալ ֆիզիկո-աշխարհագրական շրջանում, — գլխավորապես կլիման ու բուսականության տիրող վորոշ տեսակները: Բացի դրանից, հասարակ ողահարումը ևս, միանման աշխարհագրական պայմաններում կատարվելով՝ հարթում ե լեռնային տեսակների սկզբնական տարբերությունը:

Ուստի հողի գլխավոր տիպերի ծավալումը յերկրի մակերեսութիւնը վը չի կարող պատահական լինել, իսկ

վորովնետև և կլիման և բուսականությունը վորոշ հա-
ջողականությամբ փոխվում են հասարակածից հյուսիս,
ուստի հողերը ևս պետք ե դասավորվեն զոնաներով կամ
գոտիներով, կանոնավորապես հետևելով իրար նույն ուղ-
ղությամբ։ Պրոֆ. Ն. Մ. Սիբիրցել, վոր վերջնականապես
հաստատեց այս որենքը, վորոշում ե հետևյալ հողային
յոթ գոտիները.—

1. Լատերիտյան հողեր.— Դրանք արևադարձային և
մերձ-արևադարձային հողերն են, վորտեղ բարձր տեմպե-
րատուրան և խոնավությունը նպաստում են լեռնային
մայր տեսակների խորը ողաճարման, բակտերիաների
արագ քայլքայման, ազոտաթթվական աղերի առատ կու-
տակման և այլն։

Այս հողերը կազմվել են լատերիտներից՝ առանձնա-
հատուկ, սպունգանման, կարմրագույն լեռնային տեսակ-
ներից, վորոնք լայն չափերով բռնում են հասարակածի
շրջանները և իրենք ել ծագել են այլ լեռնային տեսակ-
ների քայլքայումից։ Բայ Ռիխտհոֆենի՝ «լատերիտյան
փխրուն շերտի հաստությունը մշտապես աճում է իր տա-
կը ձգված լեռնային տեսակների հաշվին, վորոնց քայլքա-
յումը շարունակ սաստկանում ե հետզհետե խորը գնալով»։

Սակայն դրանց հաստությունն ավելանում է և գետնի
յերեսից՝ շերտեր կապելով։ Գնայուն ջուրն ու քամին բերում
լցնում են այստեղ պինդ հողանյութեր, վորոնք նույնպես
փոխվում են լատերիտի։ Լեռնային այլ և այլ տեսակ-
ներ, ինչպես են՝ գնայուն ու բյուրեղացած թերթաքա-
րերը, խավանիստ տեսակները, արտավիժած զանգվածնե-
րը, որ., բասալտները*, նյութ են մատակարարում լատե-
րիտի կազմության համար, սակայն մեքենայական և քի-
միական պրոցեսսները, վորոնք գոյացնում են այս տե-
սակը, իրենց մանրամասնություններով չեն պարզաբան-
ված։ Արևադարձային բուսականության և վորդերի գոր-

* Հրաբուային վիժվածքների և արտավիժած տեսակների
կազմության մասին տես Ա. Պ. Նիչայեի «Между огнем и льдом»
(Կրակի ու սառուցի միջում) գիրքը։

ծունեյությամբ վերամշակվելով՝ լատերիտը սկիզբն ե դնում լատերիտյան հողերի։ Վերջիններս, առհասարակ, պարունակում են զանալան քանակությամբ փտանյութ, սովորաբար $1-2^0/_{\text{o}}$ ։ Նրանք ստացել են դեղին, կարմրավուն, մորու, շոկոլադի գույներ, հարուստ են այլ և այլ սիլիկատների քայլքայման մնացորդներով, գտնվում են հարավ-արևելյան Ասիայում, Աֆրիկայում, արևադարձային Ամերիկայում, սակայն դեռ քիչ են հետազոտված։ Նրանց ներկայացուցիչ կարող ե լինել հնդկական «ռեգուլ»-ը։ Գուցե հենց այս տիպին են մոտենում Անդրկովկասի խոնավ և տաք անկյունների միքանի կարմրավուն հողերը, վորոնք արդյունք են տեղական լեռնային հիմնական տեսակների ողահարման։

2. Մթնոլորտափոշու կամ հողմաքեր (եռլյան)-լոսս հողեր, վորոնք տարածվում են մեծ անապատներին սահմանամերձ վայրերում, մայր ցամաքների կենտրոնական մասերում, ուր կլիման խիստ ցամաքային ե։ Ողահարումն այստեղ կատարվում է քամու անմիջական մասնակցությամբ, վոր սրբում տանում ե քարափներից բոլոր մանրված մնացորդները և սփռում ահագին տարածության վրա։ Առավել խոշոր մնացորդը՝ կոտրուկ խիճն ու ավազը—շերտ են կապում իրենց գոյացման տեղում, այսինքն բուն անապատի մեջ, իսկ մանրած ավազը թանձը թուխապ կապած, լցնում ե մթնոլորտը և, թեթևության պատճառով, տարվում ե անապատի սահմաններից դուրս հեռաները։ Նա նստում ե մերձ-տափաստանային շրջանների գետնի յերեսին։ Հենց վոր անապատի շեշտակի քամին մտնում ե առատ բուսականությամբ ծուծկված տափաստանները, իր ուժը ևս կորցնում ե։ Դալար խոտերը նվազեցնում են ողի շարժողությունը և պակասեցնում նրա արագությունը։ Նրա բերած փոշին կամաց-կամաց հանդարատում ե, նստելով գետնի յերեսին։ Նա ոթեան ե գտնում յուրաքանչյուր ցողունի տակ։ Հետագայի ամենամոտ անձրևն ու ցողը նստած փոշին գետնին են սեղ-

մում և պնդացնում։ Բույսերը չեն վոչնչանում, բայց նրանց հորիզոնն աստիճանաբար բարձրանում են։ Ամեն տարի քամին ավելում են անապատները և մանրած փոշին շարունակ բերում նստացնում են տափաստաններին։ Այսպես են տեղի ունենում առանձնահատուկ, դեղնաներկ լեռնային տեսակի—լյոսսի կուտակումը։ Շարունակվելով հազարամյակներ՝ այդ պրոցեսսը բարձրացնում են գետինը։ Հազարավոր վոտնաչափ վեր և կերտում են լյոսսի հաստ ծածկոցը, վոր զգեստավորում են գետինը վերարկվանման շերտով։

Փոշու ահագին զանգվածներ են հղում իրենց ծոցից ասիական անապատները։ Նստելով՝ նրանք ծածկում են գետինն արգավանդ դեղնահողով։ Զինացիք նրա գալուն սպասում են, վորպես բերրի տարվա նախանշանի։ Փոշու մըրիկներն այստեղ բարձրանում են արևմուտքից ու հյուսիս-արևմուտքից։ Յերկնքի անամպ ժամանակ արեգակն ստանում է աղոտ դեղնագույն սկավառակի տեսք, և գետինը համակվում է փոշեղեն հաստ ծածկոցով։ Ամբողջ Միջին Ասիայում փոշեղեն մառախուղների յերևույթները հայտնի յեն։ Թուրքեստանում նրանք առաջանում են հյուսիս-արևելյան քամիներից։ Մանր փոշին շրջում են ամբողջ որերով ողի մեջ, կալնելով աչք, քիթ, բերան և շնչառություն։ Փոշու բքին ընկնելը կատարյալ նահատակություն են ճամպորդի համար։ Բնակված տեղերում փոշին թափանցում են վոչ միայն քոչվորի վրանը, այլև նույնիսկ պատուհանները, փակ տները և բոլոր իրեղենները ծածկում բարակ շերտով։ Նա նստում են տների կըռին, պատերին և մինչև անգամ աշտարակների կատարին ու յեկեղեցիների գմբեթներին։ Հաջորդ քամին նորից սրբում տանում են նրան, յեթե անձրեից կամ ցողից չի պնդացել։ Թուրքեստանում հին տների ավերակները ծածկվում են աչքից փոշու հաստ շերտի տակ և բուսական ծածկոց հագնում, վոր արագ կերպով զարգանում են այս հողմաբեր արգավանդ հողում։

Անկասկած, ներկայումս ել այդ փոշու հաշվին ե կատուրվում լյոսսի հաստ շերտերի կուտակումը, սակայն դրա այն ահագին շերտերը, վոր բռնում են հյուսիս-արևմբույան ջինաստանի և թուրքեստանի բավականաչափ մասերը, գոյացել են յերկար հազարամյակների ընթացքում յերկրի պատմության մեջնից նախընթաց շրջանում։ Ահագին ե լյոսսի հաստությունը և նրա ծավալման չափը։ Ջինաստանում նա բռնում է Գեղմանիայի չափ մի շրջան և հասնում է 600 մետր հաստության։ Լայն շերտով նա բոլորում ե ամբողջ միջին-ասիսկան անապատները՝ թուրքեստանում իջնելով մինչև 200—300 վոտնաչափ բարձրության ծովի մակերեսութից և յելնելով սարահարթերի վրա, մանավանդ Տիբեթում, մինչև 14—15000 վոտն։ Բարձրության։ Լյոսսի դիրքը մեծ անապատների սահմանների վրա, նիստեր կազմելու պայմանները, կառուցվածքը, քարացումները, — մի խոսքով այս լեռնային տեսակի բոլոր հատկություններն ու առանձնահատկությունները տեղիք չեն տալիս կասկածելու, վոր նա եռյան* ծագումն ունի։

Լյոսսը փափուկ, քննքուշ, դյուրամած, կրոտ ավազխառն կավ ե (суглинок)։ Շատ հաստություն ունեցած ժամանակ նա միորինակ ե, մշտապես զուրկ շերտավորությունից և ծակոտկեն։ Նրա գլխավոր բաղադրիչ մասերն են՝ կվարզակավային փոշին, հետը խառը բավականաչափ ածխաթթվական կիր։ Բացի դրանից լյոսսի մեջ շաղ են յեկած փայլարի մանր թերթուկներ, վորոնք սովորաբար նստած են վոչ թե հորիզոնական, այլ զանազան դիրքերով։ Լյոսսի ամբողջ հաստուցը կտրատված ե բարակ ճյուղավորված խողովակներով։ Նրանց պատերը հաճախ կրաթաթախ են։ Առավել խոշոր անցքերն իջնում են ուղղաձիգ և դեպի ներքև ճյուղեր արձակում։ Դրանք յերբեմնի ցողունների և խոտարմատների հետքերն են։ Ծա-

* Եռլը հունական ասասպելաբանության մեջ հողմերի աստվածն եր, ուստի եռյան կոչվում են այն ձևացումները, վորոնք ծագում են քամու գործունեյությունից։


կոտկենությամբ եւ բացատրվում լյոսսի ծծողականությունն ու ջրի թափանցկենությունը. նա ագահությամբ ներս եւ առնում ջուրը և չի անցկացնում իր միջով։ Դրա հետ միասին նա ցույց եւ տալիս ուղղաձիգ մասերի բաշխվելու հակումն և հեշտությամբ բնության մեջ առաջ եւ բերում պատի պես խորխորատներ։ Զինաստանում նա կը տըրպած եւ խոր-խոր կիրճերով, վորոնք դալարվելով ամեն



Նկ. 6. Լյոսսի կիրճեր և սյուներ Հոանգո գետի հովտում.

ուղղությամբ՝ ձգվում են շատ ու շատ վերստեր (նկ. 6)։ Հստ յերեսութին նրանք առաջացել են ստորերկրյա ջրերի ազդեցությունից։ Լյոսսի վերին հաստ շերտերի մեջ նկատվում են առանձնահատուկ կրային ձգուկ շերտեր (конкремция), այսպես՝ ոռւսերեն ասած «ժուրավչիկ» (Lossmännchen)։ Ծածկելով գետինը վերարկվանման, լյոսսը պատահում է նաև բլրալանջերին ու հովիտներում։ Գալով քարացումներին, նա պարունակում է գետներեսի տափաստանային կենդանիների մնացորդներ։

Հենց այս լեռնալին տեսակի վրա յել, խոտաբույսերի ոգնությամբ, կազմվում են մեր քննելի տիպի հողերը։

Նրանց գունավորումը բաց ե, մոխրագորշ, դեղնագույն-
դորշ ու կարմրավուն։ Նրանց քիմիական կազմը մերձե-
նում ե մայր տեսակի կազմին։ Նրանք աղքատ են փտա-
նյութով, պարունակում են սովորաբար $1^0/0$ և վոչ ավելի
քան $2^{1/2}/0$, սակայն կարող են բավականաչափ հաստու-
թյան հասնել։ Նրանց կառուցվածքը կոշտուկ մանրամաղ,
փոշու պես ե, կամ մանրահատիկ (տես նկ. 7)։ Ուստա-


տանում այս տիպի հողերի
ներկայացուցիչը հանդիսա-
նում են թուրքեստանի և
Անդրկասալյան շրջանի լյոս-
սահողերը, վորտեղ անձրևներ
տեղում են վաղ գարնան և
աշնանը, իսկ շոգերը հաս-
նում են $50^0/0$ ըստ Ցելսիու-
սի։ Ինչպես հայտնի յե, այս-
տեղի ողը համակված ե դեղ-
նավուն, փոշիամած թխպով։
Ուստի և փտանյութի շերտը
և գոյանում ե մթնոլորտից
նստած նյութերի ոգնու-
թյամբ, Ընդհանուր առմամբ,
այստեղի հողը նպաստավոր

Նկ. 7. Եռլյան-լյոսս հողի
հատված.

Ե բուսական կյանքին, սակայն մթնոլորտային խոնավու-
թյան պակասության պատճառով մշակովի հողերը պահան-
ջում են արհեստական վոռոգում։ Այս նպատակով այստեղ
սարքում են այսպես կոչված «արխ»-եր, այսինքն՝ յերե-
սից ծածկած նովդաններ, վորոնք գետաջուր են բաշխում,
նույնալիք և «քյանը զներ»։ այն ե՝ ստորերկրյա առուներ,
վորոնցով դուրս ե գալիս գետնատակի ջուրը։ Բացի Արալ-
կասպիական ցածրադիր հարթությունից, մեր քննելի հո-
ղային գոտին բռնում ե ասիական մայր ցամաքի նշանա-
վոր մասը՝ Զինաստանի լյոսսի շրջանները, հարավային
արևմտյան Հնդկաստանը, Իրանը, Արաբիան և շարու-
նակվում ե մինչև հյուսիսային Աֆրիկա։ Ամերիկայի շո-

բային մասերում նկատելի յեն նույնպիսի փոշիակաղմ հողեր։ Հարավային կիսագնդում նրանց ներկայացուցիչը հարավային Աֆրիկայի կարմրահողն եւ հոտտենտոտների և բեչվանների յերկրում։

3. Չոր տափաստանների կամ՝ անապատա-տափաստանային հողեր։ — Մրանք հյուսիսային և հարավային կիսագնդերի այն հողերն են, վորոնք ծածկված են բոիկով (полынь) և բոիկ-կողիով (кактус)։ Նրանք առաջ են գալիս ավաղախառն կավի (суглиноκ) և կավամուռն ավաղի (супесок) մայր տեսակներից և ունեն կինամոնի կամ գորշ գույն։ Այս պարագայում նրանք ներկայացնում են սեահողի փոխվող մի շարք վիճակներ։ Յժվրոպական Ռուսաստանում այս շերտը բռնում է Ուրալ և Ստորին Վոլգա գետերի միջև մի լայն տարածություն և իջնում տարածվում է Մանիչ գետի ջրավազանը, Ղրիմի տափաստանային մասը և Սև ծովի ափերը։ Ասիական Ռուսաստանում ելի այս գոտուն են պատկանում Ուրալյան, Տուրդայան Ակմոլինյան և Սեմիպալատինյան շրջանների մասերը։ Այս լայնածավալ տարածության վրա տեղի յե ունենում ողահարում, չնայած վոր հողի մեջ խոնավության պակասություն կա։ Անձրևներ տեղում են հազվադեպ և տեսական յերաշտամիջոցներով։ Տեղումների տարեկան քանակը տարածվում է 30—40 սանտիմետրի միջև*, դրա միշտը բարուրդից ավելին ընկնում է ամառվա ամիսներին, ուստի արագ շողիանում է։ Ամառային տոթերին զուգակցում են կիզիչ քամիներ։ Զմեռը սաստիկ ցրտեր են, և տափաստանով շրջում են ձյունի բքեր։ Գետինը յերկար ժամանակ մնում է չոր, ուստի և ողահարման պրոցեսները կատարվում են թույլ և, համենայն դեպս, բավականաշափ խորը չեն թափանցում։ Վորոշ պայմաններում գոյանում են մինչև անգամ փոշու մնացորդներ։ Չոր տա-

* Մթնոլորտային տեղումների քանակը միշտ արտահայտվում է գծալին չափերով։ Վորոշվում է ջրի այն շերտի հաստուցը, վոր կոտացվեր գետնին, յեթե տեղացող ջուրը չգոլորշիանար, դետերը շթափվեր, չծծվեր հողի մեջ կամ, ընդհանրապես, չհեռանար իր թափված տեղից։

փաստանների բուսականությունը, վոր ընտելացած ե յերկար և առջորդող յերաշտի, դուրս ե գալիս պուրակ-պուրակ, թողնելով դրանց միջև իսպառ բուսազուրկ արանքներ։ Կիզիչ արևի ճառագայթներից նա խանձվում ե բուրովին և փոշի դարձած՝ քամուց շաղ ե գալիս անապատով մեկ։ Այս հողերը բովանդակում են $2^0/0$ փտանյութ (նկ. 5)։ Նրանց մշակությունը դժվարանում ե խոնավության պակասությունից։ Հաջող տարիներին մուգ շագանակագույն հողերը տալիս են հրաշալի բերք։ Բաց շագանակագույն հողերի շրջանում տարածված ե անասնապահությունը։ Արեմտյան Յեվրոպայում այդ հողերիցն են Ներքին Սպանիայի «դեսյորտոս»-ները։ Հյուսիսային Ամերիկայում նույնանման հողերի մենք պատահում ենք կալիֆորնիա, Կոլորադո, Նոր-Մեքսիկա և այլ շտատներում։ Թեկուղ այս շրջանի կլիման չունի տեմպերատուրայի ծայրահեղ տատանումներ, ինչպես ոռոսական տափաստաններինն ե, սակայն դարձյալ պակաս խոնավություն կա։ Բուսականությունը նմանապես բաղկացած ե փոշոտ և սողոսկուն փունջ-փունջ խոտերից, կողիներից (կակտուս), կարճիկ, տափին կպած մացառներից։ Հարավային կիսագնդում այս տիպի հողերը հանդիպում են Հարավային Ամերիկայի միքանի տեղերում։

4. Մեվահողերը սովորական են բարեխառն յերկըրների խոտավետ հարթություններում, մարգագաշտերին (պրերներ)։ Նրանք ամենահաջող կերպով զարգանում են գիլավազախառն կավի կամ գիլոտ լեռնային տեսակների վրա, տարածված են ընդհատվող գոտիներով արևելյան Յեվրոպայում, Ասիայի և Ամերիկայի համապատասխան շերտերում, գտնվում են նաև հարավային կիսագնդում, որ., Հարավային Ամերիկայի պամպասների շրջանում։ Այս տիպի հողերի ամենաբնորոշ որինակը ոռոսական սևահողն ե, վոր հարավային Ռուսաստանում բռնում ե 80—100 միլիոն դեսիտին։ Մերթ լայնանալով, մերթ նեղանալով, սևահողի շերտը ձգվում է Ռուսաստանի հա-

րավարեմտյան սահմաններից և հանգում Ուրալյան լեռնաշղթայի հարավային կեսին։ Նրա լայնքը տատանվում է 350—1000 վերստի միջև։ Ուրալից արևելք սևահողը տարածվում է Պերմի նահանգի հարավային գավառներում, Ուֆայի նահանգի հարավային մասերում և Ասիական Ռուսաստանում, այն եւ Տոբոլսկի և Տոմսկի նահանգների տափաստանային մասում և մասամբ Ակմոլինյան և Սեմիպալատինյան շրջաններում։ Արևելյան Սիբիրիայում նա միապաղադ չի տարածվում և յերեսում է միայն մեջումնեց կտորներով—կղզիկներով։ Բոլոր այս միապաղադ գոտիներն ու կղզիները դասավորված են Ռուսաստանում հյուսիսային լայնության $44-57^{\circ}$ միջև։ Հարավ-ռուսական սևահողի շերտն անպայման հարթ ոելյեֆ ունի։ Ներկայումս «տափաստանի» մակերեսույթն ակուված է խորխորատներով ու խոչժրով, բայց առաջ նա ավելի բազմապիսի տեսք ուներ։ Կլիման ցամաքային եւ Տարեկան տեղումների քանակը յերերվում է 46—50 սանտիմիջև։ Բույսերի աճման շրջանում տեղումները 40 սանտիմետրից ավելի չեն։ Ներկայումս յերաշտները սովորական յերեսույթն են, բայց միւչև տափաստանի հերկի տակ մըտնելը խոնավության պայմաններն ավելի նպաստավոր եյին։ Ռուսաստանի սևահողի շրջանը յերբեք ճահիճ չի յեղել, ինչպես կարծում եյին միքանի գիտնականներ, և միշտ ել յեղել ե խոտածածկ մի տափաստան կամ պըերներ, վորոնց մնացորդները պահպանվել են Սիբիրում։ Սևահողի տիպիկ մայր տեսակը լյոսսն* եւ Նրա վերին

* Յեվրոպական լյոսսն իր բոլոր հատկություններով թեպետմիանգամայննույնն ե, ինչ վոր ասիականը, այնուամենայնիվ նրա եռլյան ծագումը վիճելի յե յեղել շատ հեղինակավոր գիտնականների համար։ Անկարելի յեր ցույց տալ մի աղբյուր, վորտեղից քամին վերցներ փոշին։ Բացի դրանից, այդ շերտի կլիմայական պույմանները ևս, վորտեղ լյոսսն ե տարածված (մանավանդ արևմուտքում), աննպաստ եյին հանդիսանում եռլյան պրոցեսսների լայն զարգացման համար։ Ուստի առաջ յեկան մի շարք տեսություններ, վորոնցից շատերը տալիս եյին լյոսսին ջրային ծագում, արհամարհելով շերտավորության բացակայությունն այս տեսակի մեջ։ Այս տեսություններից վոչ մեկը չեր կարող

հորիզոնը, վոր առատորեն փտանյութերով ե սնված, ինքը սեահողն ե։ Սակայն վերջինս զարգանում ե լեռնային տեսակների վրա ևս՝ կավճի, կավի, գիլի*, և այլն։ Սեահողում փտանյութիքանակը, միջին թվով, $6-8-10^0/0$ ե։ Իր սահմաններով նա իջնում ե մինչև $4^0/0$ և բարձրանում մինչև $16^0/0$ ։ Այսպիսով սեահողն իր փտանյութիքանակով բաժանվում ե միքանի տեսակի։ Պրոֆեսոր Կոստիչեի անալիզներով նրա հանքային մասը մոտ ե տակըն ընկած տեսակիկազմին։ Կառուցվածքը հատի կավոր ե։

Կիմայի չորության պատճառով լեռնային տեսակների քայլայման լուծվող մասերը և որդանական բաղադրությունների արդյունքը դժվարությամբ են հեռանում հողից։ Տափաստանային շերտում տեղատարափ, բայց կարճատե անձրևներն անջրպետվում են տեսական յերաշտամիջոցներով, այդ ժամանակ ել տեղի յե ունենում լուծվող աղերի, գլխավորապես պոտասսի** առատ կուտակումը։ Բացի դրանից, սեահողի տակ գտնված լյոսսի մեջ կան քլորային և ծծմբաթթվական աղեր։ Կարճատե տեղատարափների միջոցում այս աղերի առատ զանգվածները չեն կարող իսպառ լվացվել դուրս գնալ հողից, ուստի լուծկեն աղերը հանդիսանում են ամեն մի սեահողի անհրաժեշտ բաղադրիչ մասը։ Հենց դրանց ներկայության մեջ են ծածկված տափաստանների անտառներից

ունենալ ամենքից ճանաչվելու հավակնություն, ուստի յեվրոպական և, մասամբ, ոռւսական լյոսսի ծագման հարցը մնում եր բայց։ Վերջերքս յեռեաց Տուտկովսկու հոյակապ հիպոթեզը, վորը լյոսսի եռլյան ծագումն անվիճելի համարելով՝ նրա կազմության պրոցեսսները սերտ կերպով կապում ե սառցային շրջանի կլիմայական պայմաններին։ Տես իմ «Лед и его работа (Սառցը և իր աշխատանքը) հոդվածը» «Вестник самообразования» 1914 թ., նմանապես իմ գիրքը՝ «Картины родины» («Типичные ландшафты Европ. России»),

* Գիլն, իրոք, նույն կրաքարն ե, բայց պարունակում ե բավականաչափ կավ։

** Պոտասսն իր քիմիական բաղադրությամբ ածխաթթվական կալիոնն ե և մոխրի գլխավոր բաղադրիչ մասը, վոր ստացվում ե բուսական վանդակների լիակատար քայլայումից։

զուրկ լինելու պատճառները։ Ծառը չի վերցնում այն հողը, վոր լուծկեն բաղադրություններով ե հարուստ։

Յերաշտներին սևահողը ցուցադրում ե փոշիանալու հակումն։ Անձրևների յերկար բացակայության ժամանակամիջոցներում արևելյան «չորաշունչ» (суховей) քամիները վեր են բարձրացնում սևահողի ամենամանր մասնիկները և քշում ահագին տարածություններ, փոշով ծածկելով մշակված արտերը և անբերրիության անհաղթահարելի պատճառներից մեկը դառնալով։ Այդ յերևույթը, վոր ժողովրդի մեջ հայտնի յե «փոշեհարը» (помоха) և այլ անուններով, վերջին տարիներում հանդես և գալիս առանձին մի ուժով։ Քանի տափաստանային շերտը հագած ուներ խոտաբույսերի միապաղաղ ծածկոցը, սևահողը չերկարող քամիանալ նույնիսկ սաստիկ յերաշտներին։ Բայց հողագործի գութանը վաղուց ի վեր խարխլել ե տափաստանը, և այդ ժամանականից փոշեղեն մառախուղները և ավագի մըրիկները դարձել են սովորական յերևույթներ Ռուսաստանի հարավում։ Նրանք յերևացին 1886, 1890, 1891, 1892 և 1893 թվերին։ Ափսոս վոր քիչ թե շատ լրիվ տեղեկություններ հավաքված կան միայն 1892 թվի համար, վորն այս պատճառով մեզ համար ներկայացնում ե առանձին հետաքրքրություն։

Արդեն ապրիլին Ռուսաստանի ամբողջ հարավի վրա սուրաց փոշու մի մառախուղ։ Ողը հանկարծ լցվեց փոշով, վոր բռնել եր յերկնակամարը և ծածկել արել։ Հստ յերևութին այդ փոշին յեկավ հեռու արևելքից, և տեղական սևահողը չեր մասնակցում դրան։ Սակայն մայիսի սկզբին տեղի ունեցան իսկական փոշու մըրիկներ։ Զոր և սաստկաշունչ քամին պոկ եր տալիս տանիքներն ու ցածը բերում նրանց վրայի կղմինտը։ Խորխրատելով գետինը, նա մղում եր իր առաջից ավագի ու փոշու ահագին զանգվածներ։ Սևսև ամպերով իրար յետելից վեր ելին բարձրանում սևահողի կծիկները և իրար հասնելով՝ ձուլվում, աչքին անթափանց մառախուղ ելին կապում։ Զոր ողից

դեղնահար ցանքսերն արմատին մոտ ցողաբեկ յեղած,
վայր եյին թափվում։ Հողը քամիացել եր $\frac{1}{4}$ արշին խո-
րությամբ։ Ամենից շատ տուժում եյին փխրուն, պարար-
տացրած արտերը. նրանք դարձան իսկական անապատ։
Մանրահողը քամուց մղվում, ահագին կույտեր եր կապում՝
 $\frac{1}{2}$ սաժ. բարձրության։ Բոլոր առուները փոշով լցվե-
ցին։ Ցանկապատերի ու թփերի շուրջը կանգնեցին սեա-
հողի ամբողջ բլուրներ։ Ծառերի վրա տերևները փոշով
ծածկվեցին։ Միքանի գավառներում նրանք այնքան չո-
րացան, վոր ձեռքերով տրորվում, մանրունք եյին կտրում։
Փոշու ամպերի մեջ քշվում տարվում եյին բազմաթիվ
միջատներ, իմիջի այլոց՝ սարդեր։ Միքանի արտերում
յերեան յեկան մոլախոտեր, վոր մինչև այդ չեյին տես-
նըված այդ տեղերում։ Այդ փոշեղեն մըրիկների տված
վնասն ահագին եր։

«Բերդյանսկի գավառում»—գրում ե այդ յերեսութին
ականատեսը (Պ. Բաղալչենկո)։ «Վոչնչացրած ե 60 հազար
դեսիատին ցանքս, վոր արդեն տվել եր առողջ ու խիտ
բողբոջներ։ Ավերած արտերի տեսքը թողնում ե ընկճող
տպավորություն։ Վոչ մի տեղ աչքը չի հանդիպում կա-
նաչ մի խոտաբույսի։ Ամեն ինչ ջարդել, խանձել, տակ-
ոել ու տարել ե անողորմ քամին։ Հյութեղ, առողջ կանա-
չով փայլիող տափարակները, կարծես թե, ներկայացնե-
ցիս լինեն զորահանդեսի մի հրապարակ (պլաց-պարագ)։ Ճա-
նապարհները լցված են մանրամաղ փոշով։ Ողի միջի փո-
շեղեն զանգվածները յերկնքով անցնելիս՝ որը կեսորով
կիսախավար եյին ստեղծում։ Ճաշամիջոցին խրճիթ-
ներում ճրագներ եյին վառում։ Հետիոտ և ձիավոր ճամ-
պորդները կորցնում եյին իրենց ճանապարհը ցերեկով։
Պոստատարները մոլորվում եյին ճանապարհից և պոստերն
ուշանում։ Փոշու հետ միաժամանակ քամին վեր եր հա-
նում ավաղի ահագին զանգվածներ։ Այսպես՝ Դոնեցի յեր-
կաթուղու շրջանում՝ ավաղը ծածկել բարձրացել եր ոել-
սերի գլխից, իսկ Տավրիկյան նահանգի հյուսիսային դա-

վառներում, ականատեսների ասելով, իսկական սամում*—
խորշակ եր»:

1892 թվի փոշեղեն մրրիկներն ընդգրկում եյին ահա-
դին մի տարածություն։ Գրեթե միաժամանակ նրանք
յերևան յեկան Դոնի շրջանում, Տարվիկյան նահանգի Բեր-
դանսկ, Մելիտոպոլ և Դնեպրովսկ գավառներում, Խերսո-
նյան նահանգի Խերսոնսկ, Ալեքսանդրիյսկ, Յելիզավետ-
պրադի, Աղեսսայի, Անանյեսկի և Տիրասպոլյան գավառ-
ներում և Բեսսարաբիայի, Յեկատերինասլավի, Պադոլյան
ու Վալինյան նահանգներում։

Դեռ ավելի ահագին եր այն տարածությունը, վորի
վրա շաղ յեկած նստել եր քամու բերած սևահողի փոշին։
Մայիսի 2-ին նա արդեն բերվել ածվել եր Ռուսաստանի
արևմտյան մասը։ Այսպես՝ այդ որը կովայում գետնի
յերեսը պատեց անթափանց մի մառախուղով։ Որը հագե-
ցավ ամենամանը գորշագույն փոշով։ Արևի լույսը մթնեց։
Զբոսնողները նկատում եյին, վոր իրենց վոտնամանները,
հագուստն ու գլխարկները փոշով են ծածկվում։ Մառա-
խուղն առանձնապես սաստիկ եր արևածագից մինչև կես-
որ։ Յերեկոյան ժամը 6-ին մոտ մառախուղը քաշվեց։ Մա-
յիսի 1-ին նման յերեկոյթներ նկատվում եյին Պինսկ քա-
ղաքում, մայիսի 2-ին փոշին յերեաց Պետերբուրգում և
Կրոնշտադտում, մայիսի 4-ին Պետերբուրգում տեղաց ցեխ-
անձրեւ Բարոն Նորդենշիլդի ասելով՝ մայիսի 3-ին փո-

* Մամումը քամի յե, վոր փչում ե արևմտյան Ասիայում,
մանավանդ քարքարոտ Արարիայում, Պարսից ծոցի յերկարու-
թյամբ և Տիգրիսի յերկու ափերին ձգված տեղերում։ Նա փչում
ե հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, ամենից ուժեղ՝ հուլի-
սին, արևմուտքից կամ հարավ-արևմուտքից։ Մամումը փչում ե
սովորաբար 2—3 որ անընդհատ և ապա մի միջոց դադար տալիս.
անընդհատ փչում ե միքանի ժամ, սակայն մոլեգնում ե իսկա-
պես միքանի բոպե միայն, և այդ միջոցին տեմպերատուրան
հասնում ե 50° և մինչև իսկ ավելի։ Նրա բերած փոշին սաստիկ
ելեկտրականացած ե և տաքացած։ Այսպիսի մի քամի ևս, վոր
Մահարայից փչելով՝ Յեղիպտոսում մեծ ավեր ե գործում, կոչվում
է շամսին, իսկ Մահարայից արևմուտք, Սենեգամբիայում «հար-
մատտանա» անունն է կրում։

շին նկատվում եր Թինլանդիայի, Շվեդիայի, Դանիայի և
Գերմանիայի այլ և այլ տեղերում։

Բուն սեահողին բնորոշ հատկությունների հետ մեկ-
տեղ բնորոշ են նույնպես և նրա տակը տարածված
լյոսսի հատկությունները, մանավանդ նրա կառուց-
վածքը։ Բազմաթիվ «ժուրավչիկ»-ներից զատ, սեահողի
տակ տարածված լյոսսի ուղղաձիգ հատվածակողմի վրա
սովորաբար լավ նկատվում են՝ կլորուկ, ձվաձև կամ յեր-
կարավուն կծիկներ։ Նրանք նկատելի յեն նույնիսկ հողի
հորիզոնում և այս պարագայում նրանք տարբերվում են
մուգ դեղնագույն կամ դեղին գունավորումով։

Արջամկների, պոնտական մկների, կուրամկների
կամ խլուրդների բների հատվածներն են դրանք, լցված
հողով կամ հողի և նրա տակի կավի խառնուրդով։ Նրանց
բնի յերկարուկ առանցքին ուղղահայաց հատվածների վրա
սուացվում են կլորուն կծիկներ, բայց յերկարությամբ
ընկած հատվածների վրա—ձվակերպ (ելլիպտիկ) յերկարուկ
կծիկներ։ Այդ կծիկները կամ, առավել ճիշտ՝ լցված բնե-
րը, կրում են ընդհանուր անուն—«խլուրդախոչ»-եր
(кротовины). և հանդիսանում սեահողի ամենաբնորոշ նշան-
ներից մեկը։ Սեահողի կազմության մեջ գետնափորներին
աչքի ընկնող դեր ե պատկանում։

Բացի հարավ-ռուսական տափաստաններից սեահողը
գտնվում է Բանատում, Վենգրիայի հարթությունների
վրա և Հարավային Ամերիկայում և ամեն տեղ ել հանդես
է գալիս մոտավորապես նույն հատկություններով, ինչ
վոր վերեռում նկարագրվեց։ Հարավային կիսագնդի սեա-
հողը, Պարանայի, Ուրագվայի պրերներից առած, նման
է ռուսականին՝ ապշելու չափ։ Ն. Մ. Սիբիրցեի ասելով՝
չի կարելի զանազանել նրան Պալտավայի և Խերսոնի նա-
հանգների սեահողից։

5. Գորշ-անտառային, այլ կերպ՝ սաղարթավոր կամ
«սև» անտառների հողեր, վորոնք բռնում են, այսպես ասած,
«նախատափաստան»-ը կամ անտառ-տափաստանային

շերտի շրջանները, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ
անտառի զավթած նախապատմական տափաստանը։ Ան-
տառի և տափաստանի սահմանագիծը չափազանց կեռու-
մեռ է, վորը կարելի յե համեմատել ֆիորդական ափերի
գծագրության։ անտառը ներս ե խուժում տափաստան
բազմաթիվ հրվանդաններով, թերակղզիներով ու առան-
ձնակի կղզիկներով։ Պարզ ե այս յերեսույթի պատճառը,
միաժամանակ և շատ խրատական։ անտառն անընդհատ
պայքար ե մղում հող զավթելու տափաստանից և կամաց-
կամաց առաջ ե շարժվում հարավ։ Ինչպես արդեն մենք
գիտենք, տափաստանային շերտի սևահողերը, վորոնք
իրենց կազմի մեջ ունեն լուծկեն աղեր, խիստ աննպաստ
են անտառի զարգացման։ Տափաստանում արհեստական
անտառաբուծության փորձերն անգամ չտվին ակնկալ-
վող արդյունքը։ Անտառաբուծության ամենամեծ փորձը
գլուխ բերեց պետական կալվածների մինիստրությունը
Յեկատերինասլավի նահանգի Մարիուպոլի գավառում,
Ազովյան ծովից ընդամենը 80 վերստ դեպի հյուսիս,
վորտեղ 1843 թվի աշնան հիմնվեց Մեծ-անատոլյան ան-
տառային տնտեսությունը, վոր ներկայումս բոնում ե
զրեթե 17 քառ. վերստ մի տարածություն։ Մինչև 35—40-
ամյա հասակը անտառն աճում եր լավ, այնպես վոր
դեռ 1890 թվին պրոֆ. Կոստիչել համարում եր միանգա-
մայն հնարավոր տափաստանների անտառաբուծությունը։
Դրա համար անհրաժեշտ եր միայն փափկացնել հողը և
հեռացնել խոտաբույսերը։ Բայց ահա վրա հասավ անմո-
ռաց 1891 թվականը, Մեծ-անատոլյան անտառում սկսե-
ցին նկատվել չորացման սպառնալի նշաններ, բազմացան
վնասատու միջատները, իսկ մի տարի հետո հին տնկինե-
րը ստացան շատ տխուր տեսք, այն ինչ նույն այդ մի-
ջոցին յերաշտների կործանիչ աղղեցությունը զրեթե
նկատելի չեղավ ընական անտառների վրա։ Նման փոր-
ձեր, վոր ստուգվեցին մի շարք այլ տեղերի վրա, ապա-
ցուցեցին, վոր արհեստական անտառ կարող ե բանել տա-
փաստանում կարճատե ժամանակ միայն, քանի դեռ նրա

արմատները գտնվում են հողի վերևի, բավականաչափ խոնավ աղերից լվացված, շերտերում*:

Այսուամենայնիվ անտառի դանդաղ առաջխաղացումը տեղի յե ունենում տափաստանների հյուսիսային շրջանում։ Մի ամբողջ շարք տվյալներ ապացուցում են, վոր նախապատմական ժամանակներում տափաստանային շրջանը ձգվելիս ե յեղել առավել հյուսիս և խորացել ե Արևմտյան Յեվրոպայի անտառային շերտում։ Դրան ապացույց ծառայում ե նախ և առաջ լույսը, վոր հարավային ծայրամասերում ստորհողյա իշխող լեռնային տեսակն ե. Բացի դրանից, Արևմտյան Յեվրոպայի լյոսսի շերտում գտնվել են մի ամբողջ շարք տափաստանային կաթնասունների մնացորդներ, վերջապես՝ տափաստանների վաղեմի սահմանների միքանի կետերում տափաստանային բույսերը կարողացել են պահպանվել, շնորհիվ տեղական հատուկ բարենպաստ պայմանների։ Այսպես են, որ., կրաքարերը և կրային ավազները՝ Ակա գետի ափերին Մասկվայի նահանգում, և Կազանից բարձր՝ Մարկվաշի մոտերքում Վոլգայի ափերի գիլահողերը (մերգելի)։

Անտառի առաջխաղացումը, վոր մեր ժամանակը և շարունակվում ե, առանց մարդու վորևե մասնակցության, պետք ե միաժամանակ դանդաղ կերպով անխուսափելիութեն փոփոխի տափաստանային հողերը։ Պայքարելով տափաստանի դեմ, անտառը պետք է հարմարեցնի նրա հողն իր գոյությանը՝ ամենից առաջ հեռացնելով իրեն մնասատու լուծվող աղերը։ Դա կատարվում է հետեւյալ կերպով։ Հայտնի յե, վոր ձյունի ծածկոցը մնում է անտառում առավել յերկար, քան տափաստանի յերեսին։ Բացի դրանից, անտառածայրերին քամին հավաքում ե մեծ ձյունակույտեր։ Գարնանը, յերբ տափաստանի ձյունը հալվել գնացել ե, անտառը շարունակում է հղել նրան իր նոր նոր

* Գ. Ի. Տանֆիլյան՝ «Главнейшие черты растительности России» (Ռուսաստանի բուսականության գլխավոր գծերը), Լրացումներ Վարմինգի գրքին՝ «Распределение растений» (Բույսերի բաշխումը): Հր. Բրոկհառլեֆրոնի:

հալվող ձյունի բազմաթիվ ջրառվակները, վորոնք մասամբ հոսում են գետնի յերեսով, մասամբ խորքը ծծվում և, գետնի տակ վորոշ խորություն անցնելուց հետո, կրկին յերես անում։ Բոլոր այս ջրերը լուծում հեռացնում են հողից նրա լուծկեն նյութերը և պետքական դարձնում անտառի բնակության։ Այս տեսակ հողի վրա քամու բերած ծառասերմերը բողբոջում են, և անտառն սկսում է բնել և տափաստանում բազմաթիվ լեզվակներով ու պուրակներով։ Հողի աղային մասերն ամենից հեշտ լուծվում տարվում են գետափերին, յերբ մեծ չափերով նրանք վարարում են գարնանը։ Ուստի և գետերով անտառային բուսականությունը տարածվում է հեռավոր հարավ, մինչև ծովափերը։ Խոնավ գետամարգերում մենք պատահում ենք ուռենու, բարդու և լաստենու(օլխա)։ Ավելի ցածրադիր տեղերում, ուր հողը, բավականաչափ խոնավ լինելով հանդերձ, չի տուժում ջրի առատությունից, բնակավորվում են մեծատերև ծառատեսակներ, վորոնք կազմում են այսպես ասված լեվադներ կամ ուրեմներ։

Բացի լուծկեն աղերը լվանալ հեռացնելուց, անտառն առաջ ե բերում իր զրաված սեահողում մի շարք այլ փոփոխություններ։ Հողի փտանյութ մասերի ինքնայրումը կատարվում ե արագ, իսկ նոր փտանյութի կուտակումն ընթանում ե դանդաղ։ Դրա հետեւանքով մուտքի ու յելքի հավասարակշռությունը խախտվում ե, և փտանյութի մասերից աղբատացած հողն ստանում ե ավելի բաց, զորշ գունավորում։ Դրա հետ միաժամանակ առաջանում ե այսպես կոչված մոխրագույն հողի (подзол), այսինքն մանրամաղ կվարզի կուտակումը, վոր հանդիսանում ե անտառային հողերի^{*} անխուսափելի ուղեկիցը։ Վերջապես սեահողի բնորոշ մանրահատ կառուցվածքը տեղի յե տալիս ընկուղածև կառուցվածքին (նկ. 9)։ Այս ճանապար-

* Մոխրագույն հողի ծաղման պրոցեսսները բացատրվում են ստորև, լորովհետև նրանք ավելի բարոշ են հաջորդ՝ անտառային հողերի գոտուն։

հով սևահողն աստիճանաբար փոխվում ե տիպիկ գորշ ռնտառային հողի. Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր մեր քննելի տիպի հողերը փոխվում են հաջորդ շերտի հողերի մի շարք աննկատելի փոխանցումներով. Յեթե անտառը շատ ժամանակ չե, վոր ծածկել ե տափաստանն, ապա նրա գրաված շրջանում մենք գտնում ենք կերպարանափոխված սևահողի առաջին աստիճանը, այսպես ասած,



Նկ. 8. Անտառային հողի հատված.



Նկ. 9. Ճիմոտ-մոխրագույն հողի հատված.

«անտառափաստանային ավազախառն կավը» (суглинок): Իսկ յեթե անտառային բուսականությունն ազդել ե յերկար ժամանակ, ապա ստացվում ե տիպիկ գորշահողը՝ պարզապես արտահայտված յերեք հորիզոններով. Վերինը՝ $1\frac{1}{2}$ —3 դեցիմետր հաստությամբ, վոր գրեթե զուրկ ե վորեւ վորոշակի կառուցվածքից և աչքի յե ընկնում իր վորշ, գորշ-կինամոնի կամ մուգ-գորշ գույնով. Հետևյալ հորիզոնը (Նկ. 8) ցուցադրում ե ընորոշ ընկուզաձև կառուցվածք, այսինքն բաղկացած ե կլորուն, բազմանիստ կոշտուկներից, խառն մանրամաղ կվարզի կամ կայծքա-

բաթթվի հետ, և ունի գորշ գույն։ Յերբորդ՝ ամենաստորին հորիզոնը, ներկայացնում է ողահար լեռնային մայր տեսակը՝ զանազան կավեր, գիլեր, լյոսս և այլն։ Վերին հորիզոնի փոտանյութի քանակը տատանվում է $3^0/0$ -ից մինչև $5-6^0/0$, միջին հաշվով նա իջնում է $2-1^0/0$, Վերին աստիճանի հետաքրքիր են պրոֆ. Կոստիչնի փորձերը, վորը սեահողի ընական փոխանցումը գորշահողի կատարեց արհեստականորեն։ Այս նպատակով լցրեց սեահողով գլանածեւ մի փորձանոթ, ծածկեց յերեսը տերեների շերտով և յերեք տարի պահեց բավականաշափ խոնավ վիճակում։ Սեահողը փոխվեց գորշահողի՝ $2^1/2^0/0$ փոտանյութով։ Այս խիստ խրատական փորձը պարզապես ցույց է տալիս, թե ինչպես են առաջ յեկել գորշ-անտառային հողերը։ Այս հողերի գոտին ունի ծայրահեղ կեռումեռ գծագրություն և շատ անգամ ծայրամասերում բաժանվում է անջատ կղզիկների։ Նա ձգվում է ամբողջ միջին Ռուսաստանով արևմուտքում սկսած Լյուբլինի և Վալինյան նահանգներից և վերջանում արևելքում Կամա և Վյատկա գետերի ավազանով։ Յեվրոպական Ռուսաստանի սահմաններից դուրս գորշ-անտառային հողեր կան Սիբիրիայում, հատկապես Տոմսկի նահանգի հարավային մասում։ Դրանց նման հողեր նկատելի յեն Գալիցիայում, Վենգրիայում և միջին Գերմանիայում։ Գրեթե անկասկած է, վոր գորշ-անտառային հողեր գոյություն ունեն Հյուսիսային Ամերիկայում։ Նրանք պետք են ընկած լինեն այն շտատներում, վորտեղ պրերներին սկսում են փոխարինել անտառները։

6. Ծիմոտ-մոխրագոյն հողերը (дерновые и подзолистые) սովորական են փշտերև անտառներում։ Յեվրոպական Ռուսաստանում նրանք բռնել են նրա տարածության $2/5$ -ից վոչ պակաս մասը։ Այստեղ նրանք ընկած են յերբեմնի սառցադաշտերի* շրջանում։ ուստի և նրանց ներքեւ ըն-

* Սառցադաշտային դարաշրջանի մասին Ռուսաստանում տես իմ գիրքը «Картины родины», նույնպես իմ հոդվածը «Лед и его работа», «Вест. образ.» № 9 1904 թ. և «Спящая Русь», «Журнал для всех» ամսագրում 1899 և 1900 թ. № 9 և 10,

կած շերտը սառցաբեր (валун) ավազներ ու ավազախառն կավեր են: Այս հողերի փուանյութը շատ չե, ընդամենը $2-3^{\circ}/_{\text{o}}$, վորի պատճառով նրանք բաց գունավորում ունեն: Նրանց բնորոշ կողմն այն ե, վոր պարունակում են շատ կայծքարաթթու՝ $80^{\circ}/_{\text{o}}$: Հողի այս կարեոր բաղկացուցիչ մասն, այսպես ասած՝ մոխրագույն մասն (подзол) ե գլխավորապես: Ամեն մեկը տեսած կը լինի այս մանրամաղ նյութը յերկաթուղու գծով բացված խրամատներում և առուների մեջ, վորտեղ նա նոտած ե հողի տակ բարակ, ճերմակ կամ գորշագույն միջնախավի պես: Հաճախ նրան կարելի յե տեսնել, պոկտալով անտառի մաժուակալած տեղերից կտորներ: Մեծ քանակությամբ մոխրագույն հողը նկատելի յե նոր ընկած ծառերի արմատների վրա: Իր տեսքով նա նմանություն ե տալիս հաճարի ալյուրին: Այս նյութը սովորական ե այնտեղերում, ուր միայն անտառներն են տարածվում: Պարզ ե, վոր նրա ծագումը սերտ կապ ունի անտառի գործունեյությանը: Ինչպես մենք գիտենք, անտառում հավաքվում են բավականաչափ բուսական մնացորդներ: Քայքայվելով, դրանք առաջ են բերում փուանյութի թթուներ՝ կրենյան և ապոկրենյան, վորոնք ունեն հանքային շատ նյութեր լուծելու ընդունակություն: Նրանք չեն ներգործում միայն կայծքարաթթվի վրա, վորը հողում յեղած շատ հանքային մարմինների բաղադրիչ մասն ե: Անտառաջուրը պարունակում ե կրենյան և ապոկրենյան շատ թթուներ, ուստի և հաճախ կինամոնի գույն ունի: Ծծվելով խորը, նա ստորհողյա շերտի վրա կատարում ե լուծող և քայքայիչ ազդեցություն: այս ազդեցությունից լուծվում հեռանում են բոլոր հանքային բաղադրիչ մասերը, բացի կայծքարաթթվից, վորն անջատվում ե իբրև փոշի և կազմում մոխրագույն շերտը: Հեռացած մասերը, վորպես հեղուկ լուծվածքներ, ծծվում են առավել խորը և նստում հողի տակ գտնված շերտում, կազմելով բազմաթիվ հատիկներ, կոշտուռուցքներ (желваки), միջներակներ, մին-

չե անդամ մուգ կինամոնի գույնի ավաղայերկաթային մի նյութի միապաղաղ միջնախավեր, վորն ստացել եւ «որտշտեյն» անունը։ Այս հանքային մարմինը, վոր ունի, առհասարակ, շատ բարդ կազմություն, պարունակում եւ այն բոլոր նյութերը, վորոնք մոխրագույն շերտից ջրալույծ յեղել՝ հեռացել ելին, ի միջի այլոց, յերկաթի և մուգ փտանյութի բաղադրությունների մեծաքանակ ոքսիդը։ Այսպիսով տվյալ գոտու յուրաքանչյուր հողում ուժեղ կերպով հանդես են գալիս յերկու հորիզոններ. վերինը՝ բաց գորշագույն, զուրկ վորեւ կառուցվածքից և ունի տարբեր կապակցություն, նայած կավի, ավաղի ու փտանյութի պարունակության. ապա ստորին հորիզոնը՝ սպիտակ, դեղնագույն կամ կապտագույն ստվերով, վոր իսկական մոխրագույն զանգվածն եւ հանդիսանում։ Այս շերտի տակ արդեն ընկած եւ ստորհողյա շերտը, վորի վերին հորիզոններում տեսնվում են որտշտեյնի առատ կուտակումները (նկ. 9)։ Նման հատկություններով ճիմոտ-մոխրագույն հողերը յերեան են գալիս ամենուրեք. Նրանց սահմանները խիստ կտրտված կեռումեռ են, ձեազնում են բազմաթիվ լեզվակներ ու կղզիկներ, վորոնք խորամուխ են լինում կից շրջանների սահմանները, վոր կախված եւ անտառային բուսականության ծավալման պայմաններից։ Այս հողերն ուսումնասիրված են գլխավորապես Յեվրոպական Ռուսաստանում, բայց, անկասկած, նրանք տարածվում են Սիբիրի անտառների կամ տայգայի շրջանում։ Արեմտյան Յեվրոպայում մի յերկար շերտով նրանք անցնում են հյուսիսային Գերմանիայով, Դանիայով, Ականդինավյան թերակղզով, Հոլլանդիայով և Ֆրանսիայով։ Բայց յերեսութին, Հյուսիսային Ամերիկայում ճիմոտ-մոխրագույն հողերը տարածված են նույն չափով, ինչ վոր Ռուսաստանում։

7. Տունդրահողերն ընդգրկում են ամբողջ բևեռային շրջանը և կազմավորման սկզբնական վիճակումն են։ Նրանք իրենց մեջ պարունակում են փտանյութ, բայց միայն ամենավերին հորիզոնում։ Քիչ են ուսումնասիրված։

Յերկրադնդի բոլոր գլխավոր տիպի հողերը վերև նկարագրած յոթ խմբերն են: Նրան շից վերջին հինգը Ռուսաստանի սահմաններումն են, և նրանց ծավալումն այնքան ե ուսումնասիրված, վոր կարելի յե նշել քարտեզի



Նկ. 10. Յերկրոպական Ռուսաստանի հողերի սքեմատիկ քարտեզ.

Վրա: Ցուցադրված (Նկ. 10) սքեմատիկ փոքրիկ քարտեզից արդեն յերեսում ե, վոր յերկրի հողերի դիմագիծն այնպես ել շատ պարզ չե, ինչպես այդ կարող ել թվականացնել առաջին նայվածքից: Ամեն մի գոտում մենք գտնում ենք հողերի ծայրահեղ զանազանակերպություն: Գոյություն ունի սևահողերի ահազին բազմատեսակություն, տարբեր իրարից և արտաքին տեսքով և կազմով: Այսպես, որ գտանյութի քանակը սևահողում տատանվում է $4^0/0 - 16^0/0$: Ճիշտ այդպես ել ճիմուտ-մոխրագույն հողերի գոտում սուր կերպով աչքի յե ընկնում կավախառն ավազի (սուպես) և ավազախառն կավի (սուզլինոկ) միջի տարբերությունը. իրենց հերթին դրանք ևս ներկայացնում են շատ զանազանակերպություն: Յենթատիպ հողերի այս բոլոր բազմազանությունը, այնուամենայնիվ, յենթարկվում ե վորոշ որինականության: Ամեն տեղ ևս կարելի յե ճշտել նրանց ամենասերտ կախումը մայր տեսակների կազմից և յերկրի ռելյեֆից, ուստի և իմանալով հողա-

կազմության բոլոր պայմանները, վորոնք իշխում են տվյալ վայրում, կարելի յե նախադուշակել, թե ինչ տեսակի հողեր են լինելու այնտեղ: Մի այլ կողմից՝ մենք կարող ենք հետախուզել, չնայած յենթատիպ հողերի գանազանակերպության, նրանց այն ընդհանուր գծերը, վորոնք բնորոշում են տվյալ գոտին:

Յերկրի հողային դիմագծի խայտաբղետությունն ուժեղանում ե դեռ անթիվ փոխանցումներով, վորոնք գոյություն ունեն գլխավոր տիպի հողերի մէջև: Հազվագյուտ դեպքերում միայն նկատվում են կլիմայի և բուսականության սուր փոփոխություններ, իսկ Փիզիկո-աշխարհագրական պայմանների փոփոխությունները կատարվում են աննկատելի: Այս իսկ պատճառով գոտիների սահմանները վոչ մի տեղ չեն ներկայացնում սքեմատիկորեն կանոնավոր գծեր. նրանք ծայրահեղ աստիճանի կեռումեռ, կտրտուկ են և կազմում են բազմաթիվ կղզիներ, հրվանդաններ, վորոնք իջնում խորանում են հարևան գոտիների մեջ: Վերջապես վոչ մի գոտի ինքնովին համատարած չի բռնում ամբողջ յերկրագունդը: Տիպիկ գոտիները հանդես են գալիս միայն յերիզաշերտերով և բծանման, վորոնք մեկ լայնք են տալիս, մեկ սեղմ ծավալ ստանում: Նայած մայր ցամաքների գծագրության և յերկրագնդի վրա ունեցած դիրքին, վորոշ հողային գոտիներ կարող են խոպառ բացակայել: Այսպես, որ., հարավային կիսագնդում մենք չենք գտնում գորշանտառային ու ճիմոտ-մոխրագույն հողեր: Յերկրի մակերևույթի այն մասերը, վորտեղ նրանք կարող եյին զարգանալ, ծածկված են ովկիանոսով:

Հողային գոտիների միորինակությունն ու խիստ հաջորդականությունը խախտվում են դեռ տեղի լեռնադրական, յերկրաբանական և կլիմայական պայմաններից, ստեղծելով մի ամբողջ շարք հողային տիպեր, վորոնք չեն յենթարկվում զոնալ որենքին, այլ հանդես են գալիս այս ու այնտեղ կղզիկներով ու բծանման: Դրանք այսպես

կոչված ինտրագոնալ և ազոնալ հողերն են։ Առաջին տերմինը վերաբերում է փոտանյութ, դեռ լիովին անկազմակերպ հողերին։ յերկրորդը՝ այնպիսիներին, վորոնց կազմի մեջ ակնհայտնի դեր խաղում է դեռ փոփոխության չենթարկված մայր տեսակը։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր բոլոր ազոնալ հողերը թե իրենց կազմով և թե իրենց բոլոր հատկություններով չափազանց բազմատեսակ են։ Իրրե որինակ, մենք նայենք նրանց ամենատարածված տեսակները, այն ե, աղուտները, փոտանյութ-բնածխատական, ճահճային, ալյուվալ և կմախքային հողերը։

Աղուտները (սոլոհց) գոյանում են այն դեպքերում, յերբ մայր տեսակները պարունակում են իրենց կազմի մեջ վորեկիցե մի լուծկեն աղ, կամ յերբ այդ աղը գոյանում է նրանց ողահարման միջոցին։ Այս հողերը կարող են յերեալ միայն տաք և չոր կլիմայում, վորտեղ խոնավության պակասությունն արգելք է աղերի լուծմանն ու հեռանալուն։ Աղուտներ կան աշխարհի բոլոր մասերում և հանդես են գալիս եռյան, տափաստանային և սև հողերի գոտիներում։ Նրանք տարածված են ամբողջ հարավային մոլոսաստանում, հարավ-արևմտյան Սիրիրիայում, Անդրկասպյան յերկրում և Թուրքեստանում։ Նրանք բովանդակում են մինչև $8^{\circ}/_0$ փոտանյութ։ Աղերից նրանց մեջ գոտնվում են ամենից հաճախ կերակրաղը, քլորական նատրիոն, ծծմբաթթվական նատրիոն (գլաուբերյան աղ), ծծմբաթթվական կալցիոն (գիպս) և ածխաթթվական նատրիոն (սողա)։ Իրենց գունավորմամբ աղուտները շատ մոտ են այն գոտու հողերին, վորի սահմաններում տարածված են, սակայն անձրեներից հետո նրանց մակերեսույթն ստանում է ճերմակ գունավորություն։ Այս հողերն անհարմար են կուլտուրական բույսերի մեծամասնության համար։ Հարկ է լինում մաքառել նրանց ծավալման դեմ, դիմելով արհեստական վոռոգման և դրենաժի-ան-ջրդիացման։ Վերջինս անպայման անհրաժեշտ ե՝ հեռացնելու համար աղերով հարուստ ջրերը, այլապես հողի

մազականության շնորհիվ այդ լուծվածքները վերև կքաշվեն, և դրսի շերտը կհարստանա առավել խորը հորիզոններից բերված աղերով:

Թուրքեստանում պատահում են աղուտների ամբողջ անապատներ՝ միանգամայն անհարմար յերկրագործական կուլտուրայի համար: Դրանք՝ «խաք», «թաքիր» և «շոր» ասված աղախառն ցեխերն են ու տիղմը՝ տափակ կիտուկներով: Մերձկասպյան տափաստաններում ցրված են աղախառն կավի թմբիկներ՝ աղախոտերով (camphorosma)՝ ծածկված:

Նույն բնույթով ու հատկություններով աղուտներ յերեսում են Վենգրիայում, Հնդկաստանում, Արաբիայում, Հյուսիսային Ամերիկայի արևմտյան նահանգներում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլ տափարակ ու չոր յերկրներում:

Փտանյութ-բնածխատական (перегнойно-карбонат.) հողերը գոյանում են կրաքարից, կավճից, գիլերից և բնորոշվում են ածխաթթվական հարուստ աղերով, Նրանք հաճախ թույլ են զարգացած և բովանդակում են անփոփոխ մայր տեսակի շատ մնացորդներ, մանավանդ յերբ զետեղված են սրաթեք լեռնալանջերին: Նրանք յերբեմն պարունակում են շատ փտանյութ և ունեն մուգ գորշ գույն: Լեհաստանի հարավային մասում – Լյուբլինի և Ռադոմի նահանգներում, այդպիսի հողերը խիստ տարբերվում են շրջապատող բաց մոխրագույն հողերից իրենց գույնով: Այստեղ նրանք կրում են «ռենդզինա» ու «բորովինա» անունները: Դրանց հատվածը տալիս ե հետեւյալ պատկերը: – Վերեսում հողի մութ հորիզոնն ե, կավճիքազմաթիվ սպիտակ սրսկումներով: Դրանց տակը՝ կպչուն, գիլոտ կավը, վոր պարունակում ե առատորոն կավճախիճ, իսկ դեռ ավելի խորը՝ մայր տեսակը – կավիճը:

Այս տեսակ հողեր նկատելի յեն բոլոր այն տեղերում, ուր դուրս են զալիս կրաքարեր, սակայն նրանք յերբեք չեն բռնում նշանավոր տարածություններ: Նրանք գտնվել են, իմիջի այլոց, կալուգայի, Նիժեգարողյան և Պոկովի նահանգներում և այլն:


Ծահճային հողերը կամ ճահճուտներն առաջ են գալիս այն միջոցին, յերբ խոնավությունը շատ շատ եւ Սրանց կարգին են դասվում նախ և առաջ տորֆահողերը։ Սրանք չափազանց բիրտ, կոշտ հողեր են, վոր ոթեան են տալիս միայն սակավաթիվ, վոչ շատ պահանջկոտ բուսական տեսակներին։ Նրանք կազմությամբ քիչ են տարբերվում իրենց տակը տարածված տորֆից, և հանքային մասերի տոկոսը շնչին ենրանց մեջ։ Յերկրագործական կուլտուրայի համար նրանց նշանակությունն աննշան եւ։



Նկ. 11. Պոլեսյեյի ճահիճ՝ դեռ չչորացած տեսքով.

Առավել կարևոր են այսպես ասած տղմոտ հողերը, վոր տարածված են հանքային տեսակի յերեսին ու պարունակում են շատ թթված փտանյութ։ Այս հողերը սովորաբար հատուկ են թթված մարգագետիններին և տարածված են շատ մեծ չափերով Ռուսաստանի հյուսիսային կիսում — Ճիմուտ-մոխրագույն հողաշերտի վրա։ Բացի դրանից, մենակ Պոլեսյեյում (Պրիպյատ գետի ավազանում) նրանք բռնում են 2000 քառ. կիլոմետրից ավելի մի տարածություն։ Տեսական խոնավության միջոցին ճիմուտ-ճահճային հողերը

վորխում են տղմոտ-ճահճային հողերի և, ընդհակառակը, վերջիններս, խոնավություն քաշված պարագայում, դառնում են ճիմոտ-մոխրագույն հողեր։ Նրանք բնորոշ են հարուստ փտանյութով, $-4^{\circ}/_0 - 20^{\circ}/_0$, և որգանական փտանյութի թթուների առատությամբ։ Յերկրագործական կուլտուրայի համար առանց ցամաքեցման նրանք անպետք են,



Նկ. 12. Պոլեսյեյի ճահիճ՝ չորացրած տեսքով.

բայց իրենց սկզբնական վիճակում ես սնուցանում են մարդացին բազմատեսակ բույսեր՝ այլ և այլ խոտեր, յեղեղնախոտեր, ձիազի, ճահճային ընձախոտ (լյոտիկ), մկնականջ (незабудка), բելոզօր (белозор) և պես-պես խաչաղիկ և հովանոցավոր տեսակներ։ Մացառների ու ծառերի տեսակներից պատահում են ուռիներ, թղտենի, լաստենի (ольха). Գարնան և ամառի սկզբներին ծաղկում են ընձախոտն ու խաչաղիկները, այս տեսակ մարդագետիններն ստանում են դեղին գունավորում։ Ավելի ուշ ծաղկում են թրթնջուկներն ու խոտերը, և վարդագույն ու գորշ գունավորություն եւ ստացվում. վերջապես, յերբ

յերեան են գալիս բելոզորի և հովանոցավոր խոտերի ծաղիկները, մարգագետիններն ընդունում են սպիտակ գունավորում։ Այս ծաղիկներն են հանդիսանում այստեղ հողի գլխավոր կերտողները։ Նրանց խիտ արմատացանցն առատնյութ ե մատակարարում փտանյութ կիտելու։ Հողի խոնավ ու տղմոտ հորիզոնը բովանդակում ե յերկաթ ոքսիդի (լիմոնիտ) բազմաթիվ կինամոնագույն միջներակներ և ֆուֆորաթթվական յերկաթի (վիվիանիտ) * յերկնագույն կամ բոլորովին սպիտակ սրսկումներ։ Այդ մութ շերտում նստած ե սպիտակավուն կավային կամ ավազային հորիզոն, վոր փոփոխվել ու ոդահար ե յեղել փտանյութի թթուների ազդեցության տակ։ Նա առատորեն պարունակում ե կայծքարաթթու և մոտենում ե իր կազմով ու հատկություններով մոխրագույն հողերին։ Ավելի ներքե ընկած ե մայր տեսակը—ավազը կամ ավազախառն կավը։

Բավականաչափ ցամաքեցրած տղմոտ հողերը հանդիսանում են բարձր աստիճանի պտղաբեր։ Այս տեսակի մի վիթխարի փորձ կատարված ե Պոլեսյեյում, վորտեղ գեներալ Փիլինսկու ղեկավարությամբ ցամաքեցրած ե ճահիճների նշանավոր մի տարածություն և դարձրած մշակովի հողեր (նկ. 11 և 12) **։

Ազոնալ կամ թերատ հողերին պատկանում կմախքային կամ բոխ հողերը, վորոնք գոյացել են կոտրտուկ պինդ կոպճաքարի, ջրախճի (բալիկ) և ավազոտ լեռնային տեսակներից, և ալլյուվալ հողերը, վորոնց ծագումն արդյունք ե գլխավորապես գետերի գործունեյության։ Առաջին տեսակ

* Խոնավ, ճահճոտ մարգագետինների հողերի տակ տարածված շերտերում վիվիանիտը պատահում ե իրրե ոքսիդացած բաղադրություն, վոր ունի ճերմակ գույն։ Այդ շերտից դուրս գալով և չորանալ սկսելով՝ նա ագահությամբ միավորում ե ողի թթվածինը և դառնում ե ոքսիդային յերկնագույն մի բաղադրություն, ուստի վիվիանիտը ճերմակ վիճակում ունենալու համար պահելու յե բերանն ամուր խցանած սրվակներում։

** Ռուսաստանում ճահիճների գոյանալու և տարածվելու սկայմանների մասին տես իմ լրացումները «Քետերսի գեղեցիկ գրքում. «ЧТО ГОВОРЯТ КАМНИ» (Խոչ են ասում քարերը)։

հողերը հանդիպում են գլխավորապես լեռնոտ տեղերում։ Այս հողերիցն են Ղրիմի հարավային ափի հողերը, վորոնք ծածկված են այգիներով ու անտառներով, նույնպես և կովկասի, Ռուսական հարավ-արևելյան Սիբիրի և Արևմտյան Յեվրոպայի լեռնային տեղերի շատ հողեր։ Մուսաստանի հարթավայր մասերում այս տիպի հողերին են պատկանում ավազահողերը, վորոնք բռնում են այստեղ լայնատարած շերտեր ու շատ տեղերում քամու ոգնությամբ կապում են ավազաթմբեր-դյուներ, մանավանդ գետերի ու ծովերի ափերին։

Առանձին ուշադրություն են գրավում Ռուսակասպիական նահանգի մերկ ավազները, վոր ներկայացնում են ավազաթմբերի անապատներ կամ ավազաբլուրներ (բարխան), ինչպես և յերկարածիդ յերիզաշերտ ավազները Մուսաստանում՝ Վոլգա, Ակա, Կլյազմա, Ճնա, Ժիգորա, Դեսնա, Վերին Դնեպր, Պրիպյատ և Վիսլա գետերի ափերով, վորտեղ նրանք ծածկված են մեծ մասամբ սոճու (сосна) թափուտներով։ Այս հողերիցն են դարձյալ կոտըրտուկ կամ կլորած սառցաբեր խճերի-մորենների հողերը, վոր մեծ չափերով բռնում են յերբեմնի սառցադաշերի շրջանը։ Մոխրագույն հողերի շերտում շարունակ «ճաղատի» յետալիս ավազկոտ և սառցաբեր քարերի կիսամոնագույն կավը (валунная глина): Առանձին շերտում յերեռում են աղային մասերից լուծված լյոսսի և լվացված կոտըրտուկ կավճախճի մերկացած տեղեր և այլն։ Բոլոր այս տեսակ հողերը հողակազմության պրոցեսսի առաջին աստիճաններն են և դրանք են, վոր մի ամբողջ շարք աստիճանական փոխանցումներով դառնում են տվյալ գոտու տիպիկ հողեր։

Ալյոսվալ (գետալից նյութերի) հողերը նստում են գետափերին կապած մարգերին (պոյմա) ու ահազին չափերով տարածվում են թե Յեվրոպական և թե Ասիական Մուսաստանում։ Այս շրջանի բոլոր գետերը, բացի սակավաթիվ լեռնայիններից, ունեն գարնանային կանոնա-

վոր հեղեղումներ^{*}: Նրանց բերած լիցքը բաղկացած ե
ավազներից ու կավերից՝ մեջները բազմաթիվ պեսպես
հանքային բաղադրություններ, որու, յերկաթոքսիդ (լիմո-
նիտ) ու ֆոսֆորաթթվական յերկաթ (վիվիանիտ) եւ այլն:
Գետամարգերի (ուրաքանչափ) հողերն այդ լիցքերից եւ վերցնում
են իրենց հանքային մասը կազմելու նյութը: Իսկ մար-
դային բուսականությունը, վոր բնակավորվում եւ լիցքերի
վրա ջուրը քաշվելուց հետո, նպաստում եւ փուանյութի
առատ հավաքման: Գետն ամեն տարի բերում եւ լիցքի
նյութերի նորանոր զանգվածներ, և դրա համար հողը չի
կարող լիովին կազմակերպվել: Անփոփոխ կեցած մայր
տեսակը—գետաբեր ալյուվին—աչքի բնկնող մասնակցու-
թյուն եւ ունենում նրա կազմի մեջ: Առատ խոնավության
շնորհիվ գետամարգերի հողերը պարունակում են մեծ
քանակությամբ թթուներ և այս կողմից մոտենում են
տղմոտ-ճահճայիններին: Նրանց մեջ հողակազմության
պլոցեսսները կատարվում են մեծ յեռանդով և, այս կամ
այն կերպ դուրս գալով ջրի վարարման սփերայից, այս
հողերն ստանում են այն գոտու հատկությունները, վո-
րի մեջ գտնվում են: Յերբեմն արհեստական կերպով
նրանց հատկացնում են բանջարանոցային ու դաշտային
կուլտուրայի: Այդպես, որու, Վիսլայի ափերին նրանց
պաշտպանում են վարարումներից պատճեշներով: Գետա-
մարգերի բնական ցամաքումը տեղի յեւ ունենում իրեն
գետի գործունեյությամբ, վոր վոչ միայն լիցքեր եւ տա-
լիս, այլև վողողում տանում եւ իր ափերը և հունը և
անընդհատ խորացնում իր տաշտը: Անհավասար կերպով
քանդելով իր ափերը, նա փոխում եւ իր տաշտը, թեքելով
մեկ աջ, մեկ ձախ: Դրա արդյունքը լինում եւ այն, վոր
գետափին գոյանում են բազմաթիվ տերրասներ ու խու-
թեր, վորոնցից միայն ցածրիններն են հանդիսանում
գարնան վարարումից հեղեղվող գետամարգը: Այսպիսով

* Տես Ա. Պ. Նեչայևի հոդվածը «Реки России», հավելված
ռուսական թարգմ. Ելիզե Ռեկլյուի «Земля» գրքի: Հրատ. ՅՈ.
Ն. Պապովայի, 1904 թ.:

ամեն մի գետամարդ, վաղ թե ուշ, դառնում ե տերրաս
և դուրս ե գալիս հեղեղման սփերայից։ Ուստի գետա-
մարդի յուրաքանչյուր հող, վաղ թե ուշ, պետք ե ցամա-
քի։ Այս մոմենտից նա յենթարկվում ե ընդհանուր հողա-
կազմության պայմաններին ե ստանում այն հատկու-
թյունները, վորոնք հատուկ են տվյալ գոտուն։


Ասածներից յերեսում ե, վոր յերկրի մակերեսույթի այլ
և այլ տեղերում մենք կարող ենք դիտել հողակազմության
զանազան աստիճաններ։ Մենք տեսնում ենք, վոր մի շարք
աստիճանական փոխանցումներով բռի, կմախքային հողե-
րը փոխվում են լիովին կազմակերպված հողերի։ Ընդհան-
րապես հողի հասակն ահազին նշանակություն ունի։

Ողահարման պրոցեսսները պահանջում են ժամանակ,
բուսականությունն աստիճանաբար ե աճում լցնում քա-
րոտ ու ավազոտ տարածությունները։ Վորքան ավելի շուտ
յերես ե ընկնում մայր տեսակն, այնքան ավելի հեռու
յեն գնում հողակազմության պրոցեսսները։ Պարզ ե, վոր
հողային ծածկոցը չի կարող պատել յերկրագնդի ցամաք
մասն ամբողջովին։ Հողերը գոյություն ունեն այնտեղ,
վորտեղ առձեռն կան այն բոլոր պայմանները, վորոնք
անհրաժեշտ են նրա կազմակերպության համար։ Այսպես,
որ, սառցադաշտի տակ յեղած տեղերն իսպառ զուրկ են
հողերից։ Հողակազմության պրոցեսսները տունդրաներում
գտնվում են սաղմային վիճակում։ Թարմ, ծովից դուրս
գցած ավազը հանդիսանում ե այն սկզբնական նյութը
միայն, վոր յերկար փոփոխություններով կարող ե հողի կազ-
մության սկիզբը դնել։

Հողի դիմագծի խայտաբղետությունն ուժեղացնում
են գոյություն ունեցող բավականաչափ բարձրավանդակ-
ները։ Լեռնային տեղերում սպասելի յեն հողի ուղղաձիգ
գոտիներ, վորոնք պետք ե հաջորդեն իրար ստորոտից
դեպի գաղաթը յելնելով, նույն կարգով, ինչ կարգով վոր
նրանք հաջորդում մեկ-մեկու հասարակածից դեպի բևեռ-
ները։ Պրոֆեսոր Վ. Վ. Դոկուչայևին իրոք հաջողվեց, իր
գովկաս կատարած ճանապարհորդություններից մեկի

միջոցին, դիտել այստեղ տիպիկ հողերի որինական հա-
ջորդականությունը։ Հետաքրքիր ե այն, վոր նա նկատեց
սևահողը հենց այն բարձրության վրա, վորտեղի կլիմա-
յական պայմանները մոտ են կանգնած ռուսական տա-
փաստանների կլիմային։

Յերկրագնդի վրա հողերի տարածման մասին մինչեւ
որս ձեռք բերած լիակատար ու կուռ փաստերը հնարա-
վորություն տվին դնել հողերի քարտեզագրության հիմ-
քում ոռւս գիտնականների կլասսիֆակացիոն սկզբունք-
ները։ 1903 թ. լույս տեսած Յեվրոպական Ռուսաստանի
հողային քարտեզը պարզ ցույց ե տալիս ռուսական հո-
ղային ուսումնասիրությունների արդյունքը։ Նրա ամենա-
գեղեցիկ բացատրությունը Ն. Մ. Սիբիրցեի լեկցիաների
դասընթացն ե, վոր տպվեց նրա մահից հետո, «Հողագի-
տություն» վերնագրով։ Այս գրքի հաջողությունը, վորի
վաճառքն սպառված ե այժմ, բացահայտ կերպով ապա-
ցուցում ե, թե այդ նոր գիտությունը վորպիսի խոր կեն-
սական հարցեր ե շոշափում։ Մեր այս գրքույկը նպա-
տակ ունի ձեռք բերելու ռուսական հողագիտության հա-
մար նոր բարեկամներ, գլխավորապես նոր սերնդի միջից,
և, յեթե մենք կարողանանք ընթերցողներից մեկն ու մեկի
մեջ սաղմել այդ ձգտումն՝ ավելի մանրամասն ուսումնասիրե-
լու հողագիտությունը—մենք մեր նպատակին հասել ենք։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220039097

(esg.)

A II
39097



ԳԻՒԸ 35 ԿՈՊ.

101 707
8 ՏՆԳՈՎԱՏՈՎ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1926
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ